

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈՅԻ
ԵՖԻՍ ՈՒԴԱԼՑՈՎԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ի



ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

(2024-2029թթ.)



Մեր կարգախոսն է՝

Որակյալ կրթությունը մեձ նպատակներին հասնելու հիմքն է.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Նախաբան	2
2. Ուսումնական հաստատության գործունեությունը	3
3. Ուսումնական հաստատության իրավիճակի վերլուծություն՝ ուժեղ և թույլ կողմերը	10
4. Հաստատությունում առկա հիմնախնդիրները	43
5. Հաստատության գործունեության նպատակները և խնդիրները	49
Նպատակ 1. <u>Հաստատության շենքային պայմանների բարելավում, նյութատեխնիկական բազայի համալրում.</u>	54
Նպատակ 2. <u>Բարձրացնել սովորողների կրթական մոտիվացիան և հետաքրքրությունը դեպի ուսումնասրությունը.</u>	67
Նպատակ 3. <u>Բարձրացնել ներդպրոցական վերահսկողության իրականացման արդյունավետությունը.</u>	78
Նպատակ 4. <u>Մանկավարժական անձնակազմի կարողությունների զարգացում և Տեղեկատվական տեխնոլոգիաների, ստեղծագործական մոտեցումների և նորարարությունների կիրառում</u>	81
6. Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացման ռիսկերը	50
7. Ակնկալվող արդյունքները	51
8. Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունները և միջոցառումները	54
9. Յուրաքանչյուր գործողության համար սահմանված ժամանակացույց, պատասխանատուներ	54
10. Մանկավարժական անձնակազմի կարողությունների զարգացում և Տեղեկատվական տեխնոլոգիաների, ստեղծագործական մոտեցումների և նորարարությունների կիրառում	80
11. Զարգացման ծրագրի կատարման արդյունքի գնահատման չափանիշներ	88
12. Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացման վերահսկողության մեխանիզմները	89
13. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ	90

ՆԱխաբան

«ՀՀ Լոռու մարզի Լեւոնտոնտվոյի Ե. Ուդալցովի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի 2024-2029թթ. զարգացման ծրագիրը մշակել և կազմել էմ ՀՀ ԿԳՄՄ նախարարի՝ 22.09.2022թ. «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման ձևաչափը և զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողական ցուցանիշներն ու պահանջները» N 35-Ն հրամանի հիման վրա և ՀՀ ԿԳՄՄ նախարարի՝ 18.04.2023թ. N 399-Ա հրամանի պահանջների համաձայն՝ հաշվի առնելով ուսումնական հաստատության նախորդ տարիների ներքին գնահատման ցուցանիշներն ու հաշվետվությունները, դպրոցում առկա հիմնախնդիրները և դրանց լուծմանը միտված աստիճանական քայլերը՝ ի նպաստ դպրոցի և դպրոցում իրականացվող ուսումնադաստիարակչական գործունեության զարգացման:

Իմ նպատակն է՝ զարգացման ծրագրում հստակ, իրատեսական և չափելի ներկայացնել ուսումնական հաստատությունում առկա իրավիճակը, որի հենքի վրա մշակել և պլանավորել էմ դպրոցի զարգացման անհրաժեշտ ուղղությունները և դրանց ուղղված ռազմավարությունը: Դպրոցի գործունեության ռազմավարական պլանի քայլերը ներկայացրել էմ ըստ ոլորտների, ժամանակացույցի և առկա խնդիրների առաջնահերթությունների՝ հիմքում դնելով հանրակրթության պետական նոր չափորոշչի պահանջները: Վեր էմ հանել դպրոցի զարգացման հիմնական առաջնահերթությունները, դրանց իրականացման համար մշակել համապատասխան գործողություններն ու քայլերը՝ գնահատելով առկա և անհրաժեշտ մարդկային, մասնագիտական, նյութական և ֆինանսական հնարավորությունները, դպրոցի և համայնքի առանձնահատկությունները:

Երկար տարիներ /22 տարի/ աշխատելով դպրոցում՝ սկզբում՝ որպես ուսուցիչ, ապա որպես տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ, կարևորում էմ դպրոցում առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի ապահովումը, ուսուցիչ-աշակերտ-ծնող համագործակցությունն ու ամուր կապը: Այս միջավայրը առողջ հող է՝ դպրոցի առջև դրված խնդիրները, այն է՝ առաքելությունն իրականացնելու համար:

Ժամանակակից դպրոցի առաքելությունը

- Հանրակրթական ծրագրերի իրականացում՝ նոր չափորոշչային պահանջներով.
- Ուսումնադաստիարակչական մրցունակ գործընթացի իրականացում.
- Աշակերտակենտրոն ուսուցումը՝ որպես ուսումնական գործընթացի կարևորագույն հիմք.

- Հայրենասիրության և հումանիզմի ոգով դաստիարակված քաղաքացիների ձևավորմանը նպաստող որակյալ կրթության ապահովում:
- Ուսումնական և սոցիալ-հոգեբանական միջավայրի ապահովում, որը կնպաստի մասնակցային և ժողովրդավարական նկրտումներով անհատների ձևավորմանը:
- Յուրաքանչյուր աշխատողի և սովորողի ստեղծագործական կարողությունները բացահայտող և խթանող, անհատի մտահորիզոնի համակողմանի զարգացմանը նպաստող որակյալ կրթության ապահովում:
- Ժամանակակից աշխարհի մարտահրավերներին դիմակայող անձի ձևավորում:
- Մարդու իրավունքների և այդ իրավունքների իրացմանը նպաստող քաղաքացու ձևավորում:

1. Ուսումնական հաստատության գործունեությունը.

Դպրոցի հասցեն՝

ՀՀ Լոռու մարզ, գ. Լերմոնտովո, 1-ին փողոց, 1-ին փակուղի, 2-րդ շենք

Դպրոցի անվանումը՝

«ՀՀ Լոռու մարզի Լերմոնտովոյի Եֆիմ Ուդալցովի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Էլեկտրոնային փոստ՝ lermontovo@schools.am

Հեռախոս՝ +0322 68658

ՀՀ Լոռու մարզի Լերմոնտովոյի Ե. Ուդալցովի անվան միջնակարգ դպրոցը հիմնադրվել է 1885թ.: 1958թ. դպրոցը տեղափոխվել է նոր մասնաշենք, որը նախատեսված է եղել որպես զինվորական հիվանդանոց (հոսպիտալ):

2005թ. դպրոցի շենքը հիմնանորոգվել է պետական բյուջեի հաշվին:

2019թ. դպրոցն անվանակոչվել է՝ ի պատիվ և ի հիշատակ Խորհրդային Միության հերոս, օդաչու՝ Եֆիմ Ուդալցովի:

«ՀՀ Լոռու մարզի Լերմոնտովոյի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը 22.01.2003թ. գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Գուգարքի տարածքային բաժնում. գրանցման թիվ 62.210.00331:

Դպրոցի կանոնադրությունը հաստատվել է 2017թվականին:

Ուսումնական հաստատությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում և առաջնորդվում է ՀՀ Սահմանադրությամբ, «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Ազգային փոքրամասնությունների մասին», «Լեզվի մասին» ՀՀ օրենքներով և դպրոցի կանոնադրությամբ:

Ուսումնական հաստատության գործունեության նպատակը՝ յուրաքանչյուր սովորողի կրթության ապահովումն է՝ հանրակրթական հիմնական և լրացուցիչ ծրագրեր իրականացնելու միջոցով. յուրաքանչյուր երեխայի, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿ ունեցող), ինչպես նաև ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին մասնակցության և հանրակրթության պետական չափորոշչով սահմանված արդյունքների ապահովումն է:

ՀՀ Լոռու մարզի Լերմոնտովոյի Ե. Ուդալցովի անվան միջնակարգ դպրոցի գործունեության առաջնային դրույթներից են ժողովրդավարության, անձի ազատ զարգացման, լայն մտահորիզոն և աշխարհայացքով, ինչպես նաև ժամանակակից աշխարհում մրցունակ անհատի ձևավորման, ազգային և համամարդկային արժեքների գույզորդման և դրանց պահպանման սկզբունքները:

Համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից տրված լիցենզիայի (05.12.2012)՝ դպրոցն իրավունք ունի իրականացնելու հետևյալ կրթական ծրագրերը՝ ըստ համապատասխան սահմանային տեղերի.

- ա. Տարրական հանրակրթական - 74 տեղ (Լիցենզիա՝ N° 0899)
- բ. Հիմնական հանրակրթական - 65 տեղ (Լիցենզիա՝ N° 0892)
- գ. Միջնակարգ հանրակրթական - 23 տեղ (Լիցենզիա՝ N° 0722)

2023-2024 ուստարվա դասարանների և սովորողների թիվը.

Դպրոցն ունի սովորողների կրթադաստիարակչական աշխատանքները կազմակերպելու բավարար հնարավորություններ: Դպրոցի շենքը հարմարեցված է 180 աշակերտի համար, որն սպասարկում է Լերմոնտովո խոշորացված համայնքի (միավորվել են Լերմոնտովո և Անտառաշեն համայնքները) տարբեր ազգերի (հայ, ռուս և եզդի) երեխաներին: Դպրոցում 161 սովորողներից 30-ը դպրոց են հաճախում Անտառաշեն համայնքից:

Դպրոցում գործում է հայերենով և ռուսերենով ուսուցմամբ՝ ընդհանուր թվով՝ 16 դասարան: Ուսուցումն

իրականացվում է 2 լեզվով՝ հայերեն և ռուսերեն: 2024թ. հունվարի 3-ի դրությամբ՝ հայերենով ուսուցմամբ դասարաններում սովորում է ազգությամբ հայ 30 աշակերտներ, ռուսերենով ուսուցմամբ դասարաններում՝ ազգությամբ ռուս(մոլդկան)՝ 127 և ազգությամբ եզդի՝ 4 աշակերտ: Դպրոցում սովորող աշակերտների ընդհանուր թիվը՝ 161 է:

Ֆինանսական միջոցների սղության և դասարանների թերձանրաբեռնվածության պատճառով՝ դպրոցում հիմնականում հայերենով ուսուցմամբ դասարանները բազմահամակազմ են, բացառությամբ՝ նոր չափորոշիչներով դասավանդվող փորձարարական 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարանների:

2017թ. դպրոցն անցել է համընդհանուր ներառական կրթության, թեև մինչ այդ էլ դպրոցն ընդունել է ԿԱՊԿ ունեցող երեխաների, քանի որ ծնողները հնարավորություն չեն ունեցել գյուղից քաղաք տանել և իրենց երեխաներին կրթության տալ հատուկ դպրոցներում: 2023թ. սեպտեմբերի դրությամբ, դպրոցում սովորում է Վանաձորի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի կողմից գնահատված՝ միջին ծանրության 2 և թեթև ծանրության 1 աշակերտ:

Դպրոցի առաքելության և կրթադաստիարակչական աշխատանքներում կարևորում են սովորողների աշխարհայացքի ընդլայնումն ու բազմակողմանի զարգացումը, հասարակական-քաղաքական պատրաստվածությունը, իրենց իրավունքների և պարտականությունների պատշաճ կատարումը, առողջ դատողությունների և ճիշտ որոշումների արդյունավետ իրականացումը, մասնագիտական ճիշտ կողմնորոշումը, ժամանակին համընթաց մրցունակ քաղաքացու ձևավորումը: Այդ նպատակին է միտված լինելու տնօրենության /տնօրեն, տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ, ՄԿԱ գծով տեղակալ/, խորհրդակցական մարմինների /ԴԽ, ԾԽ, ԱԽ/, ՄՄ նախագահների, դասուցիչների, ուսուցիչների, ուսումնաօժանդակ աշխատանքներ իրականացնող աշխատակիցների կողմից կյանքի կոչվող դպրոցական և արտադպրոցական աշխատանքները: Ուսումնական հաստատությունում սովորողների մերօրյա կրթադաստիարակչական աշխատանքներում առաջնային ուշադրություն են պահանջում նաև SՀՏ ակտիվ կիրառմանը, բուլինգի և բռնության դրսևորումների բացառմանը, մեդիագրագիտության մակարդակի բարձրացմանը նպաստող զրույցները, հանդիպում-քննարկումները, բանավեճի ակումբներն ու բազմաբովանդակ դպրոցական և արտադպրոցական միջոցառումները:

Ժամանակակից դպրոցի առջև դրված առաջնային խնդիրներից է նաև կամավոր ատեստավորմանը մասնակցող ուսուցիչների թվի ավելացումը, մասնագետների անընդհատական ինքնակրթությունը, քանի որ, ինչպես տեսնում ենք,

մեր շուրջն ամեն ինչ թռիչքային է զարգանում և դպրոցում նորարարական մեթոդների կիրառման պահանջարկը ոչ միայն արդիական է, այլև անընդհատ ավելանում է: Այս ամենի հիմքում պետք է դրված լինի սովորողների կրթության որակի բարձրացմանը նպաստելու գործընթացը, նոր ՀՊԶ-ներով աշխատելու, օլիմպիադաներում, կրթամշակութային մրցաշարերում և նախագծային աշխատանքների իրականացման գործում աշակերտների մասնակցության մակարդակը բարձրացնելուն նպաստելը: Այսինքն, պետք է զարգացնել կրթության այն տեսակը, որտեղ կարևորվում է աշակերտի ինքնուրույն կողմնորոշումը, աշխատանքը, աշակերտակենտրոն ուսուցումը:

2021 թվականից դպրոցն ընդգրկված է պարենի համաշխարհային ծրագրի հայաստանյան գրասենյակի աջակցությամբ իրականացվող «Դպրոցական սնունդ» ծրագրում, որի շրջանակներում կազմակերպվում է ուսումնական հաստատության տարրական դպրոցի սովորողների համար ամենօրյա տաք սննդի ապահովումը. տարրական դպրոցի 55 սովորողներից «Տաք սնունդ» ծրագրում ներառված են 47-ը: Սա համայնքի /մոլոկանների/ կարծրատիպերի դրսևորման օրինակ է, երբ երեխային թույլ չեն տալիս դպրոցում, պետության աջակցությամբ սնվել, որովհետև այդ սնունդն իրենք իրենց աշխատանքով չեն վաստակել (իրենց՝ «Տաք սնունդ» ծրագրից խուսափող ընտանիքների պարզաբանումն է): Ընդ որում, այդ ընտանիքների հետ բացատրական աշխատանքը, որ իրենք այս երկրի քաղաքացի են, օրինապահ հարկատու և դա արդեն խոսում է իրենց վաստակածի մասին, դեռևս նրանց անդրդվելի են պահում և՛ նշված ծրագրից օգտվելու և՛ բազմաթիվ այլ արտադասարանական միջոցառումների մասնակցելու հարցում:

2023-2024 ուստարվա սկզբից ուսումնական հաստատության ՀՊԶ ներդրված 2-րդ, 5-րդ, 7-րդ դասարանների ուսումնական պլանները կազմվել են և դասավանդումն իրականացվում է ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի N 136-Ն որոշման հիման վրա: Նշված դասարաններում դասավանդող ուսուցիչները, բացառությամբ 2023թ. սեպտեմբերից հետո ընդունված 3 ուսուցիչների, անցել են համապատասխան վերապատրաստման դասընթացներ: Թեև, 2024թ. հունվարից դպրոցն ունի մենթոր ուսուցիչ, որի հետ համագործակցությունը լուրջ խթան է նոր ՀՊԶ-ների անխոչընդոտ ներդրման, ինչպես նաև բազմաթիվ նորամուծությունների շուրջ ծագած հարցերը քննարկելու և դրանց լուծման ճիշտ տարբերակներ մշակելու գործում:

Ուսումնական հաստատության և համայնքի համագործակցությունը շատ թույլ է: Սա ևս համայնքի բնակչության ազգային առանձնահատկությունների ցայտուն դրսևորումներից է: Ըստ այդմ՝ դպրոցի զարգացման ծրագրի հիմնախնդիրներից մեկն էլ համայնքի և ուսումնական հաստատության սերտ կապի ապահովումն է, աշխատանքը ծնողների և համայնքի հետ: Համայնքի հետ սերտ համագործակցությունից է կախված նաև ճանաչողական էքսկուրսիաների, արշավների, շաբաթօրյակների, ցերեկույթների, ինչպես նաև տարբեր արտադասարանական

միջոցառումների կազմակերպումը, որը նպաստում է կրթադաստիարակչական աշխատանքների բազմազանությունն ապահովող բովանդակությանը, սովորողների սոցիալական ներգրավվածությանը, հասարակական-քաղաքացիական պատասխանատվության և կարողունակությունների զարգացմանը, պետության և համայնքի նկատմամբ հոգատար վերաբերմունքի ձևավորմանը: Այստեղ դպրոցը լուրջ և անընդհատական աշխատանք իրականացնելու անհրաժեշտություն ունի:

Զարգացման ծրագիրը մշակելիս, կարիքի բազմակողմանի գնահատում իրականացնելու նպատակով, հանդիպել եմ Լերմոնտովո խոշորացված համայնքի ՏԻՄ-ի, բնակչության, շահառու խմբերի հետ: Նույն նպատակով իրականացրել եմ նաև հանդիպում-քննարկումներ խորհրդակցական մարմինների՝ մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդների հետ, ծանոթացել առկա իրավիճակին, խնդիրներին ու հնարավորություններին: Կարիքի ճիշտ և համակողմանի գնահատումը հիմք է դարձել մշակել և ստեղծել աշակերտահեն և համայնքահեն ծրագիր:

Դպրոցում խնդիրներն անթիվ են. սկսած համայնքի կարծրատիպերից, մինչև ֆինանսական միջոցներ, կրթության հանդեպ անտարբեր վերաբերմունք ու դպրոցի շենքային պայմաններ: Դպրոցի շենքը տիպային չէ, երկհարկանի կառույց է՝ կառուցված անհատական նախագծով: Դպրոցում առկա է 12 դասասենյակ, 1 առարկայական կաբինետ՝ Armat լաբորատորիա, գրադարան, որը գործում է նաև որպես համակարգչային սենյակ, առկա է շուրջօրյա ինտերնետային կապ:

Դպրոցի մարզադահլիճը վերանորոգվել է 2019թ.: ՆՁՊ-ի կաբինետը ևս ունի վերանորոգման և վերազինման կարիք: Դպրոցում առկա արհեստանոցը չի գործում և ունի վերանորոգման ու նորագույն տեխնոլոգիաներով վերազինելու կարիք: Դպրոցն ունի նաև ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության լաբորատորիաների, բուժկետի ստեղծման կարիք: Չկա շախմատի համար առանձնացված առարկայական դասասենյակ: ԿԱՊԿ ունեցող աշակերտների համար ևս չկա հարմարեցումներով (ռեսուրս) սենյակ: Սրանք մինչ օրս լուրջ և չլուծված խնդիրներ են՝ նաև դպրոցում դասասենյակների սղության պատճառով: Դպրոցը գործում է 1 հերթով՝ 5-օրյա ռեժիմով: Ուսումնական գործընթացի երկհերթ կազմակերպումը կապված է տրանսպորտային խնդիրների և համապատասխան ուսուցիչների պակասի հետ: Դպրոցի ուսուցիչներից 2-ն են Լերմոնտովո համայնքի բնակիչ, մյուսները Վանաձորի բնակիչներ են, հետևաբար, ամեն օր աշխատանքի են գալիս Վանաձորից: Գյուղի տրանսպորտի հետ կապված դժվարությունները մեծանում են հատկապես ձմռանը, իսկ Լերմոնտովոյում ձմեռը համեմատաբար երկար է:

Դպրոցում գործում է վերանորոգված ճաշարանը, որը 2021թ.-ին համալրվել է խոհանոցային սարքավորումներով ՀՊԾ աջակցությամբ: Սկիզբը դրվել է «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի շրջանակներում, որն այժմ արդեն

շարունակվում է ՀՀ Կառավարության ֆինանսական աջակցությամբ:

Դպրոցում ուսումնական գործընթացն իրականացվում է օրինակելի ուսումնական պլանի հիման վրա՝ տնօրենի կողմից հաստատված ուսումնական պլանով, դրա հենքի վրա կազմված դասացուցակով և տարեկան ուսումնադաստիարակչական աշխատանքային պլանով, որի հիման վրա էլ դպրոցի մյուս օղակներն են պլանավորում իրենց աշխատանքները: Դպրոցում ռուսերենով ուսուցմամբ դասարաններում հայերենը՝ որպես պետական լեզու, ուսուցանվում է սկսած 1-ին դասարանից՝ հայերենով ուսուցմամբ դասարանների համար նախատեսված դասագրքերով, ծրագրերով և չափորոշիչներով, սակայն՝ դրանց անհամապատասխան դասաժամերով (օրինակ՝ «Այբբենարանը» հայերենով ուսուցմամբ դասարաններում ուսումնասիրվում է 7, ռուսերենով ուսուցմամբ դասարաններում՝ 3 դասաժամով: Ռուսերենով ուսուցմամբ 1-ին դասարանում սովորող ռուս և եզդի երեխաները սկսում են սովորել ռուսաց լեզվի և հայոց լեզվի տառերը՝ միաժամանակ. և հենց այստեղից առաջ են գալիս կրթության արդյունավետությանը խանգարող խնդիրները): Հայերենով ուսուցմամբ դասարաններում ուսումնասիրվում է 2 օտար լեզու՝ ռուսերեն և անգլերեն, իսկ ռուսերենով ուսուցմամբ դասարաններում՝ անգլերեն:

«ՀՀ Լոռու մարզի Լեւոնոստովոյի Ե. Ուդալցովի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ն ունի 32 աշխատակից:

Վարչական աշխատողներ.

- Տնօրեն – 1
- Տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ – 1
- Տնօրենի մասնագիտացված կրթական աշխատանքների գծով տեղակալ – 1

Մանկավարժական աշխատողներ.

- Ուսուցիչ – 19
- Գրադարանավար – 1
- Ուսուցչի օգնական – 1
- Զինղեկ – 1

Ուսումնառական և սպասարկող անձնակազմ.

- Հաշվապահ – 1
- Համակարգչի օպերատոր – 1
- Տնտեսվար – 1
- Հավաքարար – 2
- Պահակ – 3

Շենքային պայմաններ.

- Ընդհանուր շենքի տարածքը - 1672.16 ք/մ
- Դասասենյակները – 385.59 ք/մ
- 1-ին հարկի 5 դասասենյակներն ունեն պատուհանները փոխելու կարիք – 93 ք/մ
- 2-րդ հարկի 5 դասասենյակներ ունեն պատուհանները փոխելու կարիք – 242.22 ք/մ
- Մարզադահլիճն ունի պատուհանները փոխելու կարիք - 129 ք/մ
- Մարզադահլիճի 2 հանդերձարաններն ունեն կահավորման կարիք - 16.53 ք/մ և 14.25 ք/մ
- Տնօրենության աշխատասենյակ – 33 ք/մ
- Ուսուցչանոց - 48.38 ք/մ
- Գրադարան – 48 ք/մ
- Արհեստանոց –ունի հիմնանորոգման, պատուհանները փոխելու կարիք - 48.1 ք/մ
- Զենքի պահեստային սենյակ – 14.6 ք/մ
- ՆԶՊ կաբինետ – 32.80 ք/մ
- 2-րդ հարկի միջանցք – 220.6 ք/մ
- 1-ին հարկի միջանցքն ունի պատուհանները փոխելու կարիք - 223.65 ք/մ
- 1-ին և 2-րդ հարկաբաժինները միացնող աստիճանավանդակների պատուհաններն ունեն վերանորոգման կարիք
- 1-ին հարկում տեխնիկական աշխատողների 2 սենյակ - յուրաքանչյուրը -14.5 ք/մ
- 1-ին հարկում 2 սանհանգույց – յուրաքանչյուրը - 14.8 ք/մ

2. Ուսումնական հաստատության իրավիճակի վերլուծություն ուժեղ և թույլ կողմերը

2.1. Ուսումնական հաստատության շենքային պայմանների վերլուծություն

2.1.	Ուսումնական հաստատության շենքային պայմանների վերլուծություն	
N	Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1.	Դպրոցի տարածքը ցանկապատված է, առանձնացված ճանապարհային գոտուց.	Դպրոցի տարածքը կարիք ունի բարեկարգման. Չունի արտաքին լուսավորություն
2.	Դպրոցի շենքը հիմնանորոգվել է 2005թ. -ին.	Տանիքի հյուսիսային թևն ունի վերանորոգման կարիք
3.	Դպրոցի բակն ունի 3877 քառ/մ տարածք, որտեղ տեղակայված է նաև բաց մարզադաշտ՝ 800 քառ/մ	Կա բակում մարզադաշտ կառուցելու կարիք
4.	Տարհանման համար դպրոցն ունի 3 ելք՝ 1 գլխավոր և 2 պահուստային, բոլոր 3 ելքերն էլ գործում են.	Դպրոցն ունի 404 քառ/մ նկուղային տարածք, որը հարմարեցված չէ, չկան համապատասխան հարմարեցումներ, բայց դրանց առկայության դեպքում կարող է ծառայել որպես ապաստարան
5.	Արտակարգ իրավիճակների համար կազմված տարհանման պլանը փակցված է 2 հարկաբաժիններում՝ տեսանելի հատվածներում. Տեղակայված են 9 կրակմարիչներ՝ կրակմարիչների ցուցատախտակի հետ միասին.	Դպրոցն ունի դասասենյակների պակաս. Նոր մասնաշենք ունենալու /կառուցելու կարիք կա/ Հենաշարժողական խնդիրներ ունեցող սովորողների համար բացակայում են անհրաժեշտ հարմարեցումները
6.	Առկա է մշտական ջուր. Ապահովված է ջրահեռացման համակարգով.	Սանհանգույցներին կից 4 լվացարաններից գործում են 2-ը. Լվացարաններն ապահովված չեն տաք ջրով. Դպրոցը գազաֆիկացված չէ. Արհեստանոցն ունի եռաֆազ հոսանքի կարիք.

7.	Դպրոցում կա ջեռուցման լոկալ համակարգ/կաթսայատուն/՝ 2 կաթսաներով.	Կաթսայատունն ունի 2 կաթսաները փոխելու կարիք
8.	Դպրոցն ունի վերանորոգված ճաշարան, խոհանոց, սննդի պահեստ. Խոհանոցն ապահովված է տեխնիկական սարքավորումներով. Տարրական դպրոցի սովորողների համար իրականացվում է «Տաք սնունդ» ծրագիրը	Ճաշարանն ունի գույքի կարիք /սեղան-աթոռներ/
9.	Ստեղծված է սանիտարահիգիենիկ բավարարվիճակ. գործում է 2 սանհանգույց, առանձնացված աղջիկների և տղաների համար. յուրաքանչյուրում տեղակայված է 4 խցիկ	Չկա աշխատակազմի համար առանձնացված սանհանգույց. Սանհանգույցներում չկան հենաշարժողական խնդիրներով սովորողների համար անհրաժեշտ հարմարեցումներ. սանհանգույցներն ունեն մասնակի վերանորոգման կարիք.
10.	Դպրոցն ունի մարզադահլիճ, 2 հանդերձարան /առանձնացված տղաների և աղջիկների համար/, գույքի պահման համար նախատեսված սենյակ	Դպրոցը չունի բուժկետ. հանդիսությունների դահլիճ.
11.	Դպրոցն ունի ՆԶՊ առարկայական կաբինետ. Արմաթ լաբորատորիա. ինֆորմատիկայի կաբինետը հարմարեցվել և գործում է գրադարանում.	Չունի առարկայական կաբինետներ, շախմատի կաբինետ, լաբորատորիաներ. Չի գործում տեխնոլոգիայի արհեստանոցը, որտեղ առկա հաստոցները խոտանման ենթակա են.
12.	Դպրոցն ունի հարմարեցված 12 դասասենյակ.	10 դասասենյակներում կա պատուհանների վերանորոգման կարիք.

1-ին հարկի աջ մասնաշենքի 2 դասասենյակների մուտքն իրականացվում է իրենց նախորդող դասասենյակների

միջով: Սա որոշակի անհարմարություններ է ստեղծում դասաժամերին: Այդ դասասենյակների ելքերը հետագայում առանձնացնելու կարիք կա:

2.2 Դպրոցի նյութատեխնիկական բազայի վերլուծություն.

Դպրոցում ուսումնական գործընթացն ապահովելու համար անհրաժեշտ են նյութատեխնիկական միջոցներ, որոնք հնարավորություն կտան ուսումնական գործընթացն արդյունավետ կազմակերպել: Բայց, դպրոցի կարիքների գնահատումը ցույց է տալիս, որ դրանք քանակապես և որակապես չեն համապատասխանում որակյալ կրթություն ապահովելու անհրաժեշտ պայմաններին, հետևաբար, չեն նպաստում ուսումնական պրոցեսն ավելի բարձր մակարդակով կազմակերպելուն, բարելավելուն և արդյունավետությունը բարձրացնելուն: Դասասենյակներում տեղակայված աշակերտական և ուսուցչական սեղան-աթոռները ձեռք են բերվել գրեթե 30 տարի առաջ: Վերջին անգամ փոքրաթիվ աշակերտական գույքով համալրվել են տարրական դասարանները՝ 15 տարի առաջ՝ բարերարների կողմից. տարրական դասարանների համար 15 աշակերտական սեղան-աթոռներ, 4 հագուստի պահարան և 4 գրապահարան: Գրատախտակներից ընդամենը 4-ն են նորմալ ծառայում, մյուսները՝ տարիների ընթացքում մի քանի անգամ ներկվել են, վերանորոգվել «կյանքը» երկարացնելու նպատակով ու թեև օգտագործվում են, բայց արդեն խոտանման ենթակա են և առաջիկայում դրանք նորերով փոխարինելու խիստ անհրաժեշտություն կա:

N	Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1.	<p>Գրադարանի ֆոնդում առկա է 4519 անուն գիրք, որից 1 271 կտոր գեղարվեստական գիրք. այդ թվում՝ 1 219-ը ռուսալեզու գրականություն է, 52-ը՝ հայերեն/ 57 կտոր տեղեկատվական գրականություն /ատլասներ, բառարաններ, հանրագիտարաններ/ 100 կտոր ուսումնամեթոդական գիրք- ձեռնարկներ 600 կտոր ամսագիր 3112 անուն դասագիրք. Նոր գրականությամբ վերջին անգամ</p>	<p>Գրադարանային ֆոնդն ունի թարմացման կարիք. Անհրաժեշտ է ժամանակակից գեղարվեստական և այլ գրքերի, տեսաերիզների, աուդիոնյութերի համալում. Գրադարանը ծառայում է նաև որպես համակարգչային սենյակ և ընթերցասրահը, որպես այդպիսին, գրեթե չի գործում.</p>

	գրադարանային ֆոնդը համալրվել է 2016 թվականին:	
2.	<u>Համակարգչային սենյակում առկա է</u> մշտական ինտերնետ կապ 8 համակարգիչ 8 պլանշետ 2 բազմաֆունկցիոնալ սարք /տպիչ, սքաներ/ 2 պրոյեկտոր՝ մեկը՝ կախովի.	Համակարգչային սենյակը տեղակայված է գրադարանում. Բացակայում են շերտավարագույրները, որը խանգարում է տեսանյութերի դիտումներին, տեսադասերի անցկացմանը՝ հատկապես արևոտ եղանակին. Համակարգիչներից 3-ը չեն աշխատում, խոտանման ենթակա են. Ինտերնետ միացված է միայն 3 համակարգչի, որոնցից մեկը հիմնականում ծառայում է դպրոցի վարչական աշխատանքները կազմակերպելուն. Չկա ինտերակտիվ գրատախտակ. Սովորողները և ուսուցիչները քիչ են օգտվում S2S գործիքներից՝ համակարգիչների և ինտերնետ կապի անբավարար լինելու պատճառով. Ուսուցիչները հիմնականում ինտերնետ նյութերից օգտվում և էլեկտրոնային դասամատյանները լրացնում են տանը.
3.	<u>Գործում է Արմաթ լաբորատորիան</u> Կա 7 համակարգիչ՝ 8 սեղան, 16 աթոռներով. 3D տպիչ.	Բացակայում են քիմիայի, կենսաբանության, ֆիզիկայի լաբորատորիաները.
4.	<u>Գործում է սպորտդահլիճը</u> Սպորտդահլիճը ջեռուցվում է. Աղջիկների և տղաների համար առանձնացված հանդերձարանները վերանորոգված են. Սպորտդահլիճում առկա են մասնակի սպորտային գույք և սարքավորումներ.	

	Վոլեյբոլի և բասկետբոլի ցանցեր, ցատկերի սարք մագլցման պարաններ և աստիճաններ պտտաձող, օղակներ, գնդակներ, ցատկապարաններ, սպորտային ներքնակներ, թենիսի սեղան	Հանդերձարանները կահավորված չեն. Մարզդահլիճի հատակը ենթակա է վերանորոգման. Թենիսի սեղանը միջանցքում է տեղադրված.
5.	<u>Ղպրոցական գույք</u> Փոքր չափի՝ տարրական դպրոցի աշակերտական սեղան-աթոռ - 13 կոմպլեկտ Միջին չափի աշակերտական սեղան-աթոռ - 68 կոմպլեկտ Ուսուցչանոցում ուսուցչական 1 մեծ սեղան, 16 աթոռ Շախմատի սեղան - 17, աթոռ - 25 Գրատախտակ – 12 հատ Հանդերձապահարան - 4 հատ Դասասենյակներում գրապահարան – 4 հատ Կրկնակոշիկների պահարան - 4	Արհեստանոցի գույքը օգտագործման ենթակա չէ. ամբողջությամբ ենթակա է խոտանման. Ռեզերվային դասարանն ունի ռազմական սեղանների, հրաձգարանի սեղանի, ընդհանրապես, նոր համապատասխան գույքով համալրելու կարիք. Դասարաններն ու ուսուցչանոցն ունեն գույքի նորացման կարիք:
6.	<u>Սանհանգույցներ</u> Գործում է 2 սանհանգույց /յուրաքանչյուրը՝ 4 խցիկով/. սանհանգույցները վերանորոգվել են 2005թ.-ին	Սանհանգույցներում ջրի տարաներն ու դռների փականներն ունեն նորացման կարիք. Սանհանգույցներին կից լվացարաններն ունեն ծորակների նորացման կարիք.

Վեր հանելով ուսումնական հաստատությունում առկա նյութատեխնիկական բազայի կարիքները՝ զարգացման ծրագիրը մշակելիս նպատակ ունեն կոնկրետ քայլեր ձեռնարկել այդ բացը լրացնելու ուղղությամբ, որն ուղղակիորեն պետք է նպաստի ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունավետությանը, ուսուցիչների աշխատանքի, հետևաբար նաև կրթության որակի բարձրացմանը:

2.3. Դպրոցի կառավարման մարմինների և տնօրենի համագործակցությունը

ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2021թ. մարտի 25-ի N 25-Ն հրամանի համաձայն, ուսումնական հաստատությունում սահմանված կարգով ձևավորվել և գործում է միացյալ խորհուրդ, որի կազմի մեջ են մտնում «ՀՀ Լոռու մարզի Լերմոնտովոյի Ե. Ուդալցովի անվան միջնակարգ դպրոց» և «ՀՀ Լոռու մարզի Ֆիոլետովոյի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ները:

Միացյալ խորհրդի կազմում կա 14 անդամ:

Միացյալ խորհրդի կազմը.

N	Անուն, ազգանուն	Կրթություն	Աշխատավայր	Առաջ. մարմին	Դպրոց/համայնք
1.	Նարինե Մաթևոսյան /ԴԽ նախագահ/	բուհ	Լերմոնտովոյի Ե. Ուդալցովի անվան միջնակարգ դպրոց	ՄԽ	Լերմոնտովո
2.	Գալուստ Հայրապետյան	բուհ	Լերմ. Ե. Ուդ. անվ. միջն. դպր.	ՄԽ	Լերմոնտովո
3.	Շուբինա Մարիա	Թերի միջն.	Չի աշխատում	ԾԽ	Լերմոնտովո
4.	Բիրյուկովա Նադեժդա	միջնակարգ	Չի աշխատում	ԾԽ	Լերմոնտովո
5.	Անահիտ Հարությունյան	բուհ	Լերմոնտովոյի համայնքապետարան	համայնք	Լերմոնտովո
6.	Արման Մկրտչյան	բուհ	Լոռու մարզպետարան	Մարզպետ	Լերմոնտովո
7.	Կարեն Ավետիսյան	բուհ	Լոռու մարզպետարան	Մարզպետ	Ֆիոլետովո
8.	Էրիկ Կոստանյան	բուհ	Լոռու մարզպետարան	Նախարար	Լերմոնտովո
9.	Արմեն Հարությունյան	բուհ	Լոռու մարզպետարան	Նախարար	Ֆիոլետովո
10.	Շուշաննա Կոծիսյան /ԴԽ քարտուղար/	բուհ	Ֆիոլետովոյի միջն. դպրոց	ՄԽ	Ֆիոլետովո
11.	Մարգարիտա Անանյան	բուհ	Ֆիոլետովոյի միջն. դպրոց	ՄԽ	Ֆիոլետովո
12.	Զադորկինա Օլգա	միջնակարգ	Չի աշխատում	ԾԽ	Ֆիոլետովո
13.	Մինասունա Իրինա	միջնակարգ	Չի աշխատում	ԾԽ	Ֆիոլետովո
14.	Նովիկովա Վալենտինա	միջնակարգ	Ֆիոլետովոյի համայնքապետարան	համայնք	Ֆիոլետովո

Կոլեգիալ կառավարման մարմինը 2023թ. գումարել է 7 նիստ. ըստ նիստերի արձանագրությունների խորհրդում քննարկվել են հետևյալ հարցերը.

1. ԴԽ աշխատակարգի հաստատում.
2. 2022-23 ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների հաշվետվությունների քննարկում /տնօրենի, տնօրենի տեղակալների կիսամյակային, տարեկան հաշվետվություններ/.
3. Դպրոցի ներքին գնահատման /հաշվետվություններ/ արդյունքների քննարկում.
4. 2023թ. ֆինանսատնտեսական հաշվետվություններ, բյուջեի կատարողականի մասին հարցերի քննարկում /տնօրենի և հաշվապահի եռամսյակային, կիսամյակային, տարեկան հաշվետվություններ/.
5. 2024թ. տարեկան ծախսերի նախահաշիվների և բյուջեի նախագծի քննարկումներ.
6. Քննարկվել և հավանություն է տրվել աշխատողների տարիֆիկացիոն ցուցակի հաստատմանը.
7. Ուսումնական հաստատության կազմակերպական կառուցվածքի վերաբերյալ հարցերի քննարկում և հաստատում.
8. Ուսումնական հաստատությանն անհրաժեշտ տնտեսական ապրանքների և ուսումնական լսարանի հաստատման և ամրապնդման համար նյութերի ձեռքբերմանը վերաբերող հարցերի քննարկում.
9. Դպրոցական մակարդակում մանկավարժահոգեբանական ծառայությունների, այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող /ԿԱՊԿՈԻ/ սովորողների մասին հարցերի քննարկում.
10. Դրամաշնորհի ձևով ուսումնական հաստատությանը հատկացվելիք տրանսպորտային ծախսերի բաշխման մասին հարցերի քննարկում և հաստատում:

N	Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1.	<p>Դպրոցը ղեկավարվում է հիմնադրի և ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից ընդունված օրենսդրական ակտերի և կարգերի պահանջներին համապատասխան.</p> <p>2 դպրոցների ՄԽ-ների կողմից առաջադրված և ընտրված Կառավարման խորհրդի անդամները բավականին լավ են պատկերացում դպրոցի դերակատարությունը, առաքելությունը և</p>	<p>Խորհրդի ոչ բոլոր անդամներն են լիարժեք պատկերացում դպրոցի գործունեությունը.</p> <p>Թույլ է Դպրոցի խորհրդի կազմում իրենց իրավունքների և պարտականությունների մասին պատկերացումը.</p>

	կարողանում են խորհրդի մյուս անդամներին ավելի խորքային և բազմակողմանի պատկերացում տալ քննարկվող հարցերի վերաբերյալ:	
2.	Օրենսդրությամբ սահմանված կարգով Կառավարման խորհրդի նիստերի գումարում	Խորհրդի ոչ բոլոր անդամներն են մասնակցում բոլոր նիստերին. Հասարակական հիմունքներով գործունեությունը, զբաղվածությունը, նույն անձի տարբեր խորհուրդներում ներգրավվածությունը՝ հաճախ խանգարում է Խորհրդի անդամներին՝ ներկա լինել բոլոր նիստերին.
3.	Կառավարման խորհուրդը տնօրենի գործունեության նկատմամբ լիազորված է և իրականացնում է ընթացիկ վերահսկողություն. Տնօրենը և հաշվապահը խորհրդակցական ձայնի իրավունքով հիմնականում մասնակցում են խորհրդի բոլոր նիստերին.	Խորհրդի անդամները մակերեսային են վերաբերվում ներկայացվող հաշվետվություններին.
4.	Խորհուրդը հաստատում է տնօրենի կողմից ներկայացրած դպրոցի կազմակերպական կառուցվածքը, ուսումնական գործընթացի ռեժիմը, ներքին կարգապահական կանոնները.	Դպրոցի խորհուրդը մոտիվացված չէ իր գործունեության մեջ.
5.	Խորհրդի անդամների պատրաստակամությունն ուսումնական հաստատության գործընթացներին վերաբերող հարցերում, եթե նախաձեռնությունը տնօրենինն է, կամ ուսուցիչներինը.	Խորհրդի կողմից ուսումնական գործընթացին վերաբերող հարցերում նախաձեռնողականության պակաս կա.

2.4. Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ

Դպրոցն իր գործունեությունը ծավալում է Լեւոնտոսովո խոշորացված համայնքում՝ Լեւոնտոսովո և Անտառաշեն համայնքների դպրոցահասակ երեխաների համար: Համագործակցում է Լեւոնտոսովոյի համայնքապետի և Անտառաշենի վարչական ղեկավարի հետ: Դպրոցում մեծ թիվ են կազմում պարտուսից դուրս մնացած աշակերտները (նրանք բացառապես ռուս /մոլդկան/ ընտանիքների երեխաներն են): Սա դպրոցի ամենամեծ և առաջնային համարվող խնդիրներից է: Իրավիճակը պայմանավորված է մոլդկանների ավանդույթներով, կրոնական հավատալիքներով և նրանց ծայրահեղ ավանդական պահպանողականությամբ: Մոլդկանների կողմից բոլորովին չի կարևորվում կրթությունը, կարող են երեխային գրկել կրթության իրավունքից՝ տանը, կենցաղային, սոցիալ-տնտեսական հարցերում ընտանիքին օգնելու համար: Ոչ դպրոցը և ոչ էլ պատասխանատու մարմինները չունեն համապատասխան և ազդեցիկ լծակներ՝ այս խնդիրը կարգավորելու համար: Տարիներ շարունակ հետևողական և բազմակողմանի աշխատանք է իրականացվում համայնքի ղեկավարի, ՀՀ Ոստիկանության Լոռու մարզային վարչության Գուգարքի անչափահասների բաժնի, Լոռու մարզպետարանի ընտանիքի, խնամակալության և հոգաբարձության բաժնի, անչափահասների հետ աշխատող սոցիալ-կրթական ՀԿ-ների /«Խաչվող ուղիներ», «Առավոտ»/, ինչպես նաև Հայաստանում ՌԴ ներկայացուցիչների, Ազգային ժողովի պատգամավոր /ազգային փոքրամասնությունների շահերը ներկայացնող/՝ Ա. Մանդիկովի հետ: Պարտուսից դուրս մնացածներին դպրոց բերելու լծակներ գրեթե չկան, իսկ անչափահաս տարիքից անօրինական, բայց փող աշխատելու հնարավորությունը՝ ավելի գայթակղիչ է ոչ միայն անչափահասների, այլև նրանց ընտանիքների համար: Այս և նման հարցերում համայնքի աջակցությունը գրեթե բացակայում է: Բայց դպրոցը մշտապես կապի մեջ է համայնքապետի և աշխատակազմի հետ: Մշտապես հրավիրում ենք դպրոցական միջոցառումներին, տեղեկացնում ենք ուսումնական հաստատության ձեռքբերումների և առկա խնդիրների, ինչպես նաև աշակերտների հաճախումների հետ կապված հարցերի մասին: Մշտապես հարցում ենք ուղարկում համայնքապետարան, համայնքում նախադպրոցական տարիքի երեխաների թիվը պարզելու, նրանց ծնողների հետ նախնական հանդիպում-գրույցներ իրականացնելու համար, որպեսզի ծնողներն անտարբերություն չցուցաբերեն և դպրոց հաճախելու տարիքային շերտ լրանալուն պես՝ երեխաներին դպրոց ուղարկեն, քանի որ սա ևս խնդիր է: Բացատրվում են երեխաների տարիքային առանձնահատկություններն ու ճիշտ ժամանակին նրանց դպրոց ուղարկելու կարևորությունը: Առաջարկում ենք համայնքապետին, նախակրթարանի տնօրենությանը՝ համատեղ հանդիպումներ կազմակերպել ծնողների հետ՝ տարբեր բացատրական աշխատանքներ իրականացնելու նպատակով: Դպրոցում, ըստ կարգի, որպես խորհրդակցական մարմին՝ ծնողական խորհուրդը ձևավորված է, բայց, շատ թույլ է գործում: Տեղի են ունենում և՛ համադպրոցական, և՛ դասարանական ծնողական ժողովներ ու հանդիպումներ՝ հիմնականում դպրոցի

տնօրենության նախաձեռնությամբ: Ժողովները հիմնականում չեն արձանագրվում ծնողխորհրդի կողմից: Ծնողների մեծ մասը նույնիսկ հիմնական դպրոցի կրթություն չունի, հետևաբար, իրենց երեխաների համար էլ չեն կարևորում դպրոցն ու կրթությունը և, ստացվում է, որ ծնողական ժողովներն ու ծնող-ուսուցիչ, ծնող-դպրոց կապն ու հանդիպումներն ավելի շատ ձևական բնույթ են կրում: Սա էլ ամբողջությամբ խանգարում է ծնողխորհրդի կողմից կրթության որակի բարձրացմանը, դպրոցի առաջընթացին և զարգացմանը նպաստող առաջարկություններ անելուն, դրանց վերաբերող հարցեր բարձրացնելուն և քննարկելուն: Բայց, այս ամենին զուգահեռ, շատ են դպրոցին ուղղված նրանց պահանջները: Ծնողներն առաջնորդվում են միայն իրենց իրավունքների, բայց ոչ երբեք պարտականությունների կատարման տեսանկյունից: Կարգը պահանջում է, որ ԾԽ-ի կազմում ներգրավված լինեն նաև ազգային փոքրամասնությունների /ռուս, եզդի/ ներկայացուցիչներ: Ցավն այն է, որ տարեցտարի ոչ թե հայ ծնողներն են փորձում օրինակ ծառայել և իրենց հետևից տանել մոլորկաններին, այլ, վերջիններիս գերակշռող թվի արդյունքում՝ հակառակ գործընթացն է տեղի ունենում և, այս առումով, դպրոցը կարծես թե մնացել է մենակ իր պարտավորությունների ու խնդիրների հետ: Թույլ է ծնող-դպրոց կապը, որովհետև, շատ հաճախ, աշակերտի ճակատագրով անհանգստացած ուսուցչին, հիմնականում դասղեկներին, մոլորկան ընտանիքն իր դարպասներից ներս չի թողնում: Ուսուցիչը չգիտի, թե ինչ պայմաններում է ապրում ընտանիքը, որտեղ է իր դասերը պատրաստում աշակերտը, ի վերջո, ինչ միջավայրում է մեծանում նա: Դասղեկների կողմից հրավիրված ծնողական ժողովներին քիչ թվով ծնողներ են մասնակցում, էլեկտրոնային օրագիրը ծնողների առավելագույնը 5 տոկոսն է նայում, որի մեջ 1-2 մոլորկան կարող է լինել, քանի որ նրանք, ըստ իրենց հավատքի՝ տեխնիկական միջոցներն ու ինտերնետի կիրառությունը մեղք են համարում: Որոշ ընտանիքներ հրաժարվել են նաև «Տաք սնունդ» ծրագրից. այս ընտանիքների տարրական դպրոցում սովորող երեխաները չեն ճաշում դպրոցում /55 աշակերտներից ճաշում է 47-ը/: Չնայած այս ամենին, դպրոցը շարունակական աշխատանք է իրականացնում համագործակցության նոր եզրեր, նոր մեթոդներ գտնելու, մշակելու համար: Սա կազմում է դպրոցի ամենօրյա, մշտական և անընդհատական աշխատանքի կարևորագույն մաս: Օրինակ, հանդիպումներ ենք կազմակերպում համայնքում առկա կրոնական խմբավորումների առաջնորդների հետ, քանի որ նրանց դիրքորոշումը, խոսքը և որոշումները կարևոր են բնակչության համար: Սա ավելի ազդեցիկ լծակ է մոլորկանաբնակ համայնքում: Համագործակցում ենք Լեւոնոստովոյում գործող նախադպրոցական ուսումնական հաստատության հետ, կազմակերպում ենք համատեղ միջոցառումներ, երեխաների համար նախակրթարան-դպրոց անցումն ավելի սահուն իրականացնելու համար: Այն ծնողները, որոնց հետ համագործակցությունն սկսվում է նախակրթարանից, որպես կանոն, ավելի են արժևորում դպրոցի ու կրթության դերը: Փորձում ենք նրանց աջակցությամբ սերտ համագործակցության մեջ ներառել նաև մյուս ծնողներին:

Դպրոցի համագործակցությունն ակտիվ է Լոռու մարզպետարանի ԿԳՄՄ-ի վարչության հետ. տնօրենը մշտապես կապի մեջ է աշխատակազմի հետ, հատկապես նորամուծությունների հետ կապված պարզաբանումների առումով, հաշվետվությունները

Ժամանակին և պատշաճ են ներկայացվում, ապահովված է դպրոցի գործունեության թափանցիկությունը: Այս հարցում էլ հիմնական խանգարող հանգամանքը թափուր տեղի համար դիմող ուսուցիչների մոտ ռուսերենի իմացության պակասն է, որը պարտադիր է ռուսերենով ուսուցմամբ դասարաններում դասավանդողների համար:

Դպրոցը համագործակցում է ԿՏԱԿ-ի, ԿԶՆԱԿ-ի, ԳԹԿ-ի հետ: ԿՏԱԿ-ի հետ սերտ համագործակցության արդյունքում հնարավոր դարձավ 2023թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին հայերենով ուսուցմամբ 6, 8-9 և 10-11-12-րդ դասարաններում մաթեմատիկա /հանրահաշիվ, երկրաչափություն/ առարկայի ուսուցումը կազմակերպել հեռավար, քանի որ դպրոցը ուներ այդ կարիքը: Ի դեպ, հայերենով ուսուցմամբ դասարաններում, որքան էլ զարմանալի էր մեզ համար, հեռավար դասերը հետաքրքիր էին և արդյունավետ: Իսկ թե ինչու էին հեռավար ուսուցման համար ընտրվել հատկապես հայերենով ուսուցմամբ, այն էլ բազմահամակազմ դասարանները, որն ավելի էր դժվարացնում հեռավար աշխատող ուսուցչի աշխատանքը, որովհետև ռուս սովորողները հիմնականում անձնական տեխնիկական միջոցներ չունեն /ամառաֆոն հեռախոս, պլանշետ, համակարգիչ և այլն/, և, եթե նույնիսկ դպրոցում ապահովում էինք առարկայի ուսուցումը, տնային աշխատանքների կատարման հետ կապված լրացուցիչ խնդիրներ էին առաջանում: Մոլոկան ծնողներն էլ դեմ էին ուսուցման այդ ձևին, հետևաբար, լրացուցիչ խոչընդոտներ էին առաջանում սովորողների համար /տեխնիկայի, ինտերնետի բացակայություն և այլն/: Համայնքի առանձնահատկություններից բխող այս և բազմաթիվ այլ խնդիրներից խուսափելու և արդյունավետ հեռավար ուսուցում իրականացնելու համար որոշում կայացնելիս առաջնորդվել ենք՝ հաշվի առնելով առկա իրավիճակի բազմակողմանի ուսումնասիրության, ՄԽ-ի քննարկումների և առաջարկությունների արդյունքները:

Դպրոցը համագործակցում է նաև տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի հետ. շաբաթական մեկ օր, ՏՄԱԿ-ի ներկայացուցիչները գալիս են դպրոցում աշխատելու ԿԱՊԿ ունեցող աշակերտների հետ: Դպրոցում կա ԿԱՊԿ ունեցող, գնահատված 5 աշակերտ: Նրանցից մեկն ունի հենաշարժողական խնդիրներ /ռուսերենով ուսուցմամբ 2-րդ դասարանի սովորող/ և ծնողի դիմումի, ինչպես նաև բժշկական համապատասխան փաստաթղթերի հիման վրա նախատեսվում է առաջիկայում նրա համար կազմակերպել տնային ուսուցում:

Դպրոցում գործում է «Արմաթ» ինժեներական լաբորատորիան՝ Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության հետ համագործակցությամբ: Ամենամյա այցելություններ ենք կազմակերպում ՎՏԿ՝ ավագ դպրոցի սովորողների մասնագիտական ճիշտ կողմնորոշմանը նպաստելու համար:

Դպրոցը կցված է ՀՀ ՊՆ N գորամասին. տարվա ընթացքում, ռազմահայրենասիրական միջոցառումների շրջանակներում, հանդիպումներ, զրույց-դասընթացներ են կազմակերպվում զինվորականների հետ: Համագործակցում ենք նաև Գյումրիի 102-րդ ռազմաբազայի հետ /փոխադարձ այցելություններ, միջոցառումներ և այլն/:

Տարվա ընթացքում աշակերտների հետ հանդիպում և զրույց-դասընթաց են անցկացնում նաև ուստիկանության ներկայացուցիչները՝ ծխելու, ալկոհոլի և թմրանյութեր պարունակող նյութերի վնասակար ազդեցություններին վերաբերող թեմաներով:

Սերտ և մշտական համագործակցություն ունենք ՀՀ Լոռու մարզի Մարգահովիտ համայնքի վարչական տարածքում գործող «Մայքլ և Վերջինյա ԷՅ-ԹԻ-ՓԻ» բնապահպանական կենտրոնի հետ:

Արտադասարանական միջոցումները բազմաբովանդակ են՝ ռազմահայրենասիրության, մեղիագրագիտության, պատմամշակութային, գիտատեխնիկական, աշխատանքային դաստիարակության, ժամանցային, որոնց բոլորի հիմքում դրված է ուսումնական հաստատության կրթադաստիարակչական առաքելությունը:

N	Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1.	Ուսումնական հաստատությունը ղեկավարվում է ՀՀ կառավարության և ՀՀ ԿԳՄՄՆ-ի կողմից ընդունված նորմատիվ ակտերով	Գրեթե չկա ծնողների համագործակցությունը, բացակայում է ԾԽ-ի նախաձեռնողականությունը
2.	Դպրոցի հաջողությունների և խնդիրների մասին միշտ տեղեկատվություն ենք տրամադրում ՏԻՄ-ին	ՏԻՄ-ը առաջնորդվում է բացառապես բնակչության առանձնահատկություններով. Թույլ է, չի կարևորվում ՏԻՄ-ի կողմից նախաձեռնողականությունը, համագործակցային կապը
3.	Համագործակցություն համայնքի նախակրթական ուսումնական հաստատության հետ	Ծնողները երեխաներին նախակրթարան են ուղարկում՝ ուղղակի օրվա ընթացքում որոշ հոգսերից իրենց ազատելու համար
4.	Այցելություններ գորամասեր, պատմամշակութային կենտրոններ, մասնագիտական կողմնորոշմանը նպաստող կենտրոններ	Ոչ ծնողներին, ոչ աշակերտներին չեն հետաքրքրում գիտատեխնիկական առաջընթացն ու մասնագիտությունները
5.	Անապահով ընտանիքների համար իրականացվում են սոցիալական ծրագրեր	Կան ընտանիքներ, ովքեր հրաժարվում են անհատույց աջակցությունից /անվճար

	օրինակ՝ սոցիալապես անապահով և բազմազավակ ընտանիքների երեխաներին՝ գրքերի անվճար տրամադրում	գրենական պիտույքներ, գրքեր, ընդհուպ մինչև «Տաք սնունդ» ծրագրից հրաժարվելը. «Նվեր-նվիրատվություն» գաղափարը չեն ընդունում, հետևաբար, համայնքից բարերարներ ունենալու ակնկալիքը գրեթե զրոյական է
6.	Արտադպրոցական հանդիպումներ, մասնագիտական կողմնորոշման միջոցառումներ	Թույլ է ծնողների հետ համագործակցությունը. ուսուցիչը ստիպված է ամեն ինչ ինքն անել, ընդհուպ մինչև միջոցառումների համար հազուստ հայթայթելը

2.5 Խորհրդակցական մարմիններ

Ա. Մանկավարժական խորհուրդ

Մանկավարժական խորհուրդը կազմավորվում է մանկավարժական կոլեկտիվի օգոստոսյան առաջին նիստում: Քանի որ մինչև քառասուն մանկավարժ ունեցող հանրակրթական դպրոցի մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկվում է ողջ մանկավարժական կոլեկտիվը և ԾԽ-ի նախագահն ի պաշտոնե, մեր ուսումնական հաստատության մանկավարժական խորհուրդը ձևավորվել է մանկավարժական ողջ համակազմով:

Մանկավարժական խորհրդի նիստերն, ըստ կարգի, գումարվում են առնվազն երկու ամիսը մեկ անգամ, անհրաժեշտության դեպքում հրավիրվում են արտահերթ նիստեր.

- Տնօրենի նախաձեռնությամբ.
- Մանկավարժական խորհրդի անդամների 1/3 նախաձեռնությամբ.
- Նախարարության կամ տարածքային կառավարման մարմնի նախաձեռնությամբ.

2023-2024 ուստարում հատկապես արտահերթ նիստերի անհրաժեշտությունը նկատելի շատ էր՝ կապված նոր ՀՊԶ-ների ներդրման, կիրառման հետ:

Բ. Աշակերտական խորհուրդ

Հանրակրթական դպրոցի աշակերտական խորհուրդը ձևավորվում է դասարանական աշակերտական խորհրդի նախագահներից:

Աշակերտական ընդհանուր ժողով հրավիրվում է՝

- Տարեկան առնվազն երկու անգամ՝ աշակերտական խորհրդի նախագահի կողմից.
- Արտահերթ ժողով կարող է հրավիրվել՝ աշակերտական խորհրդի անդամների 1/3-ի պահանջով.
- Հանրակրթական դպրոցի տնօրենի նախաձեռնությամբ.

Աշակերտական խորհրդի ներկայացուցիչը, խորհրդակցական ձայնի իրավունքով, մասնակցում է մանկավարժական խորհրդի այն նիստերին, որտեղ քննարկվում են աշակերտներին անմիջականորեն վերաբերող հարցեր:

Գ. Ծնողական խորհուրդ

Հանրակրթական դպրոցի ծնողական խորհուրդը կազմավորվում է ուսումնական հաստատության դասարանների ծնողական խորհրդի նախագահներից: Ծնողական խորհրդի նախագահն ընտրվում է փակ քվեարկությամբ: Ծնողական խորհրդի նախագահը մանկավարժական խորհրդի անդամ է:

Ծնողական խորհուրդն իր մասին հաշվետվություն է ներկայացնում խորհրդի կազմի վերընտրության ժամանակ:

Կանոնադրությամբ սահմանված նպատակների իրագործման համար հանրակրթական դպրոցի ծնողական խորհուրդը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է իրականացնել այլ լիազորություններ:

Ուսումնական հաստատությունում խորհրդակցական մարմինների գործունեությունը շատ ցածր մակարդակի վրա է, գրեթե իսպառ բացակայում է նախաձեռնողականությունը հատկապես ԾԽ-ի և ԱԽ-ի կողմից, մինչդեռ, այդ մարմինները պետք է ակտիվորեն աշխատեն ի շահ դպրոցի, քանի որ նրանք հանդես են գալիս դպրոցի անունից, կոչված են լինելու դպրոցի կողքին:

2.6. Հաստատության ուսումնական միջավայրը. մանկավարժական համակազմը. կրթության որակը

2024թ. հունվար ամսվա դրությամբ, դպրոցում աշխատում է 19 ուսուցիչ: Բոլոր 19 ուսուցիչներն էլ բարձրագույն կրթություն ունեն: Նրանցից 3-ը նոր են անցել աշխատանքի և դեռևս չեն մասնակցել ուսուցչի թափուր տեղի մրցույթին: Ուսուցիչների մեծ մասի դասաժամերով ծանրաբեռնվածությունը գերազանցում է 1 դրույքաչափը: Մանկավարժական կադրերի պակաս կա, քանի որ դպրոցի առանձնահատկություններից էլնելով, ուսուցիչները պետք է ունենան նաև ռուսերենի լավ իմացություն, որն էլ դժվարություններ է առաջացնում դպրոցը համապատասխան կադրերով համալրելուն:

N	Ուսուցիչների տարիքային բաշխվածությունը.	Մանկավարժների թիվը	Արական	Իգական
1.	25 – 35 տարեկան	4	1	3
2.	36 – 45 տարեկան	8	2	6
3.	46 – 55 տարեկան	2	-	2
4.	56-65	5	3	2
5.	66-ից բարձր	0	0	0
	Ընդամենը`	19		
	Ուսուցիչների միջին տարիքը`	43		

N	Ցուցանիշի անվանումը	Ուսուցիչների թիվը /ցուցանիշ/
1.	Բարձրագույն մանկավարժական որակավորում ունեցող ուսուցիչներ	17
2.	Ըստ մասնագիտության դասավանդող ուսուցիչներ	17
3.	Կամավոր ատեստավորում	1

	անցած ուսուցիչներ	
4.	Նախարարության կողմից երաշխավորված կազմակերպություններում վերջին 3 տարում վերապատրաստում անցած ուսուցիչներ.	15

N	Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1.	Դպրոցն ունի 19 ուսուցիչ՝ բարձրագույն մասնագիտական կրթությամբ. 2-ը ոչ մանկավարժական կրթությամբ, սակայն վերապատրաստվել են և համապատասխան կրեդիտներ հավաքել.	Պատմության ուսուցիչը վերապատրաստվել և գործուղվել է դպրոց՝ «Դասավանդի՛ր Հայաստան» ծրագրի շրջանակներում.
2.	19 ուսուցիչներից 15-ը անցել են պարտադիր վերապատրաստում. 1 ուսուցիչ /ֆիզկուլտուրա/ կամավոր ատեստավորում է անցել	Միջին մասնագիտական կրթությամբ ուսուցիչներին վերաբերող կարգի արդյունքում ռուսերենով ուսուցմամբ 1-ին և 4-րդ դասարաններում դասավարի թափուր տեղ է առաջացել. Ուսուցչի թափուր հաստիքները համալրելու դժվարություններ կան կապված ռուսերենի իմացության հետ.
3.	2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում դասավանդում են նոր չափորոշիչներին տիրապետող, վերապատրաստված ուսուցիչներ.	Ոչ բոլոր ուսուցիչներն են լիարժեքորեն տիրապետում SՀS գործիքներին.
4.	Դպրոցում գործում է 3 մեթոդիկավորում՝ տարրական, հումանիտար և բնագիտական.	Քանի որ դպրոցում գործում են ոչ թե առանձին առարկայական, այլ 3՝ տարրական,

	<p>Կա ամուր համագործակցություն ոչ միայն ուսուցիչների, այլև ՄՄ-ների միջև. սկսնակ ուսուցիչներին տրամադրվում է խորհրդատվություն, իրականացվում են փոխադարձ դասալսումներ և քննարկումներ.</p>	<p>հումանիտար և բնագիտական առարկաների խմբավորումներով մասնախմբեր, ՄՄ նախագահները հաճախ լիովին չեն պատկերացնում այլ առարկաների առանձնահատկությունները. օրինակ՝ հումանիտար առարկայական ՄՄ նախագահը հայոց լեզվի մասնագետ է, բայց հաճախ ստիպված է աջակցություն և խորհրդատվություն ցույց տալ «Հասարակագիտություն» առարկայի ուսուցչին, բնագիտական ՄՄ նախագահը՝ «Շախմատ» առարկայի ուսուցչին՝ կապված այդ առարկաների նեղ մասնագիտական առանձնահատկությունների հետ, որին խորությամբ կարող է տիրապետել միայն կոնկրետ առարկան դասավանդող ուսուցիչը և այլն:</p>
5.	<p>Ուսուցիչներն էլեկտրոնային մատյանները հիմնականում ժամանակին են լրացնում.</p>	<p>Ուսուցիչն ստիպված է էլեկտրոնային մատյանների վրա աշխատել տանը.</p>
6.	<p>5-7 ուսուցիչ /ինֆորմատիկա, հայոց լ. և գրականություն, պատմություն, հասարակագիտություն, դասվար/ ունեն SS բարձր հմտություններ և ուսումնական գործընթացում ակտիվորեն կիրառում են այդ հմտությունները.</p>	<p>Դպրոցում S2S գործիքների անսարքության և նոր սերնդի սարքավորումների սակավության, ինչպես նաև առանձին համակարգչային սենյակի, ինտերակտիվ գրատախտակ, շարժական ինտերնետ չունենալու պատճառով, քիչ թվով դասեր են անցկացվում SS հնարավորությունների կիրառմամբ.</p>
7.	<p>Դպրոցն ունի արտերկրում /Գերմանիա/ մեդիագրագիտության ոլորտում</p>	<p>2018թ. ուսուցչուհին իր նախաձեռնությամբ և կամավորական հիմունքներով ստեղծեց և</p>

	<p>վերապատրաստում անցած 1 ուսուցիչ, որը պարբերաբար դասընթացներ է անցկացնում և ուսուցիչների և աշակերտների համար.</p> <p>Մեդիագրագիտության մասնագետի /հայոց լ. և գրակ. ուսուցչուհին է/ ջանքերով, ամեն տարի նաև հարակից համայնքների /Մարգահովիտի, Ֆիոլետովոյի/ դպրոցների սովորողների համար անց են կացվում սեմինար-հանդիպումներ, միջոցառողական մրցաշարեր, ինտելեկտուալ խաղեր.</p>	<p>վարում էր «ՄեդիաԱկումբ» խմբակը, բայց այն կարճ կյանք ունեցավ. Համայնքն իր ծայրահեղական կարծրատիպերով մերժում է ՏՀՏ-ը, ընդհուպ մինչև սմարթֆոն հեռախոսի ու հեռուստացույցի, ինչպես նաև ինտերնետի կիրառումը /մոլոկանների կողմից մեղք է համարվում ՏՀՏ-ների, ինտերնետի կիրառումը, հեռուստացույցի, սմարթֆոն-հեռախոսների օգտագործումը/:</p>
8.	<p>Ռուսաց լ. և գրականության ուսուցիչն աշակերտներին ակտիվորեն ներառում է տարբեր մրցույթներում: Անցած ուսումնական տարում Լոռու մարզը ասմունքի փառատոնին ներկայացրել է մեր դպրոցի 7-րդ դասարանի աշակերտուհին, 6-րդ դասարանի աշակերտուհին էլ իր փայլուն ելույթով ձեռք բերեց «Արտեկ» ճամբարում 25-օրյա հանգստի հնարավորություն.</p>	<p>Ուսուցիչների ջանքերն ու աշխատանքը հաճախ հաջողություն չեն ունենում, որովհետև ծնողները թույլ չեն տալիս երեխաներին դասերից հետո մնալ և մասնակցել արտադասարանական միջոցառումներին, որովհետև նրանք ծանրաբեռնված են կենցաղային աշխատանքներում, տնային հոգսերում.</p>
9.	<p>Դպրոցը սերտ համագործակցություն ունի բնապահպանական Էյ-թի-փի կենտրոնի հետ. ակտիվորեն ընդգրկված է կենտրոնի կրթական և հասարակական ծրագրերում.</p>	<p>Ոչ բոլոր աշակերտներին են տանը թույլ տալիս մասնակցել արտադասարանական միջոցառումներին, կամ ընդգրկվել ակտիվ հասարակական գործունեության մեջ.</p>
10.	<p>Դպրոցի առօրյային, միջոցառումներին ու դասերին վերաբերող հետաքրքիր դրվագները տեղ են գտնում դպրոցի ՖԲ-յան էջում.</p>	<p>Ոչ բոլոր աշակերտներին կարելի է նկարել բաց դաս-միջոցառումներին. հաշվի առնելով մոլոկանների կարծրատիպերը, այս հարցին ուսուցիչները նրբանկատորեն են վերաբերվում և հաճախ իրենք էլ չեն կարևորում հաշվետվության այս տեսակը և</p>

		շատ գեղեցիկ ու օրինակելի դաս-միջոցառումներ աննկատ են անցնում
11.	Ուսուցիչների հիմնական մասը /13 ուսուցիչ/ անցել են նաև համընդհանուր ներառական կրթությանը վերաբերող վերապատրաստումներ.	վերջերս աշխատանքի ընդունված 6 ուսուցիչներ դեռևս չեն անցել ներառական կրթությանը վերաբերող վերապատրաստումներ.

2.7. Հաստատության կողմից օգտագործվող տեխնոլոգիաները և կիրառվող նորարարությունները

Մենք այսօր ապրում ենք ՏՏ-ների/Տեղեկատվական տեխնոլոգիաների/ թռիչքային զարգացման ժամանակաշրջանում և, որքան էլ համայնքի կարծրատիպերը խոչընդոտ են հանդիսանում, միևնույնն է, կրթության գործընթացը կազմակերպել առանց նոր տեխնոլոգիաների կիրառության անհնար է: Մա ստեղծում է ուսուցչի ամենօրյա, անընդհատական զարգացման անհրաժեշտություն: ՏՀՏ-ների /Տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների/ կիրառման անհրաժեշտությունը ոչ միայն կարևորվում է ուսումնական բուն գործընթացի, ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման և իրականացման ժամանակ, այլև վարչատնտեսական, դպրոցի կառավարման գործընթացում՝ կառավարման մարմինների հետ էլեկտրոնային հաղորդակցության, հաշվետվություններ կազմելու, հաշվապահական գործընթացների կազմակերպման, ինչպես նաև դպրոցի փաստաթղթաշրջանառությունն էլեկտրոնային եղանակով կազմակերպելու նպատակով:

Դպրոցում, ուսումնական գործընթացում ՏՏ-ների ավելի մեծածավալ և բազմակողմանի կիրառումն սկսվել է Քովիդ-19-ից հետո: Այստեղ դարձյալ բխվում ենք Լերմոնտովո համայնքի բնակչության կրոնական առանձնահատկություններին: Դա է պատճառը, որ ուսուցման օն-լայն գործընթացի ժամանակ դպրոցը կանգնում է լուրջ խնդիրների առաջ: 2023թ.-ի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին մաթեմատիկայի ուսուցումը ԿՏԱԿ-ի աջակցությամբ՝ մենթոր դպրոցի /ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի թիվ 1 դպրոց / ուսուցչի հետ կազմակերպվեց հեռավար /օն-լայն/: Ակտիվորեն գործի դրվեցին «Դասավանդի՝ ր Հայաստանի» կողմից տրամադրված պլանշետները, որոշ աշակերտների անձնական հեռախոսները և ուսուցիչների կողմից տրամադրված անձնական օգտագործման ինտերնետ հնարավորությունները: Այսինքն, տեխնիկայի այս թռիչքային զարգացումների դարում՝ դպրոցը դեռևս պատրաստ չէ տեխնիկական միջոցների և ինտերնետի կիրառման: Կարևորում են մանկավարժական համակազմի անընդհատական վերապատրաստումները, ինքնակրթությունը, թիմային և պատրաստակամ աշխատանքն այս իրավիճակներում, որը նպաստում է պատվով դուրս գալ ստեղծված նմանատիպ իրավիճակներից:

N	Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1.	<p>Բոլոր ուսուցիչներն աշխատում են «Էլեկտրոնային դասամատյան»-ներով՝ https://emis.am/ կայքում.</p> <p>Թեմատիկ, օրվա, դասղեկի պլաններն ու հաշվետվությունները հիմնականում մշակում և ստեղծում են էլեկտրոնային եղանակով:</p>	<p>Ուսուցիչների մեծ մասի մոտ SS կիրառումը սահմանափակվում է միայն էլեկտրոնային մատյանի հետ աշխատանքով:</p> <p>Որոշ անհրաժեշտ փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակներն ունենալու համար դիմում են այլ մասնագետների օգնությանը:</p> <p>Ծնողներն ու աշակերտները գրեթե չեն օգտվում https://emis.am/ «Էլեկտրոնային օրագիր» բաժնից.</p>
2.	<p>Ուսուցիչներից 5-ը ակտիվորեն կիրառում են SS ծրագրեր՝ ոչ միայն կոնկրետ դասերի ընթացքում, այլև գիտելիքների ստուգման, թեմատիկ, ամփոփիչ աշխատանքներ իրականացնելիս /quizz-ներ, համակարգչային թեմատիկ խաղեր, ֆիլմերի քննարկումներ և այլն/</p>	<p>Ոչ բոլոր ուսուցիչներն ունեն ՏՀՏ-ների կիրառության խորացված հմտություններ</p>
3.	<p>Դպրոցում կրթադաստիարակչական աշխատանքներն իրականացնելիս օգտվում ենք ներքոնշյալ էջերից.</p> <p>«Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ https://www.ktak.am</p> <p>«Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամ https://kznak.am/</p>	<p>Էլեկտրոնային ռեսուրսներից ակտիվորեն օգտվում է 5-7 ուսուցիչ.</p> <p>SS-ների կիրառմամբ դասերի քանակը քիչ է. Դպրոցում չկա համակարգիչների և ինտերնետի բավարար քանակություն.</p> <p>Կա ուսուցիչների SS գիտելիքների,</p>

	«Պաշարների շտեմարան» https://lib.armedu.am «Ուսուցման ինտերակտիվ տեխնոլոգիաներ» https://esource.armedu.am	կարողությունների և հմտությունների զարգացման անհրաժեշտություն. Յուրաքանչյուր ուսուցիչ պետք է ապահովված լինի ինտերնետի առկայություն ունեցող համակարգով
4.	Դպրոցի հնարավորությունների սահմաններում ստեղծվում են և խրախուսվում անձնակազմի ինքնակրթության համար անհրաժեշտ պայմաններ, խթանվում են տարբեր մրցույթներն ու վերապատրաստումները.	Ուսուցիչների կողմից կամավոր ատեստավորմանը մասնակցելու ոչ բավարար ցանկությունը. Ուսուցիչն այսօր գրեթե չունի ինքնակատարելագործման և ինքնակրթության մոտիվացիա. Առավել ակտիվ աշխատող ուսուցիչները չեն խրախուսվում տնօրենության կողմից հատուկ մշակված ընթացակարգով /դրամական պարգևներ, խրախուսական այլ միջոցառումներ/.
5.	ԴԿԱՀ-ով /Դասագրքերի կառավարման ավտոմատացված համակարգ- https://dshh.am / կազմակերպվում է դասագրքերի ստացման, բաշխման և սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար պետական բյուջեի միջոցներից նախատեսված գումարների զեղչումը: Դպրոցի հիմնական փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է Mulberry, Schools Webmail համակարգերի միջոցով:	Դպրոցի կայքէջը՝ https://lermontovo.schoolsite.am/ , գրեթե չի թարմացվում.տեղադրվում են միայն ֆինանսական հաշվետվություններ և ուսուցչի թափուր տեղի մրցույթի հայտարարությունները.
6.	ՀՕ/Հայկական ծրագիր/, Tax service, Client	

	Treasury գանձապետական ծրագրերի միջոցով իրականացվում են ուսումնական հաստատության հաշվապահական գործընթացները:	
7.	Ուսուցիչները ակտիվորեն մասնակցում են օն-լայն դասընթացների՝ google meet, zoom, Teams հարթակներում. 5 ուսուցիչ հմտորեն կարողանում է ինքը կազմակերպել և վարել օն-լայն հանդիպումներ՝ google meet, zoom, Teams հարթակներում	Ոչ բոլոր ուսուցիչներն են կարողանում ամբողջությամբ կիրառել google meet, zoom, Teams հարթակների հնարավորություններն ու գործիքները
8.	Դասղեկներն ունեն դասարանական զրուցարաններ /chat/, ՄՄ-ները՝ օն-լայն խմբեր, ուսուցիչների համար գործում է «Ուսուցչանոց» զրուցարանը, որը հնարավորություն է տալիս մշտական շփման մեջ լինել և ցանկացած նորամուծություն առանց ժամանակ կորցնելու փոխանցել միմյանց, քննարկումներ իրականացնել նաև ոչ աշխատանքային ժամերին՝ ոչ ֆորմալ եղանակներով:	Ոչ բոլոր ծնողներն ու աշակերտներն ունեն սմարթ-հեռախոսներ և մշտական ինտերնետից օգտվելու հնարավորություններ.

2.8. Դպրոցի աշակերտական և դասարանների համակազմը և կրթության որակը

Ա. Աշակերտական համակազմ

Դասարան	Հայերենով ուսուցմամբ դասարանների քանակ	Աշակերտների թիվը	Ռուսերենով ուսուցմամբ դասարանների քանակ	Աշակերտների թիվը
Տարրական դպրոց	2	9	4	45
I	0,5	2	1	13
II	1	3	1	16
III	0,5	4	1	9
IV	-		1	7
Միջին դպրոց	3	14	5	76
V	1	3	1	6
VI	0,3	4	1	16
VII	1	2	1	22
VIII	0,3	4	1	19
IX	0,4	1	1	13
Ավագ դպրոց	1	4	1	13
X	0,3	1	1	13
XI	0,3	2	-	-
XII	0,4	1	-	-
Ընդամենը	6	27	10	134

Բ. Դասարանների համակազմը

Հայերենով ուսուցմամբ դասարանները թերձանրաբեռնված են և մինչև 2023թ. սեպտեմբերը, այդ դասարաններում ուսուցումը բազմահամակազմ դասարաններով է կազմակերպվել: 2023թ.-ի սեպտեմբերից, նոր չափորոշիչների ներդրմամբ և դրանց պահանջներով պայմանավորված, փորձարարական 2, 5 և 7-րդ դասարաններում, չնայած հայերենով ուսուցմամբ դասարանների թերձանրաբեռնվածությանը, ուսուցումը կազմակերպվել է առանձին դասարաններով: Դպրոցում գործում է՝ 3 բազմահամակազմ, 13 առանձին դասարան: Դասարանների ընդհանուր թիվը՝ 16:

Դասարան	Հայերենով ուսուցմամբ դասարանների համակազմը	Ռուսերենով ուսուցմամբ դասարանների համակազմը
1.	I, III	I
2.	II	II
3.	V	III
4.	VI, VIII, IX	IV
5.	VII	V
6.	X, XI, XII	VI
7.		VII
8.		VIII
9.		IX
10.		X
Ընդամենը	6	10

Գ. Աշակերտների թիվը 2020-23թթ. կտրվածքով.

Ավագ դպրոցում աշակերտների թիվը կտրուկ պակասում է: Սա պայմանավորված է համայնքի բնակչության կրթության հանդեպ ծայրահեղ անտարբերությունից: Համայնքի բնակչությունը /մոլոկանների մասին է խոսքը/ խստորեն կառչած է իր ավանդույթներին: Կրթությունը, նոր տեխնոլոգիաները, մտավոր աշխատանքն ամբողջությամբ անտեսված են: Բազմաթիվ ընտանիքներ նույնիսկ հեռուստացույց չունեն, ամառֆոն հեռախոսները ևս չեն խրախուսվում, ոչ բոլոր ընտանիքներում կան: Ընտանիքները նախընտրում են, որ երեխաներն իրենց օգնեն հողամասում, ընտանեկան-կենցաղային աշխատանքներում, իսկ 9-րդ դասարանից հետո նախընտրում են դպրոց հաճախելու փոխարեն գնալ գումար աշխատելու /աղջիկները մայրիկների հետ Երևանում տնային մաքրության գործերի մեջ են ընդգրկվում, տղաները՝ տարբեր բանվորական աշխատանքների/: Կրթությունը մնում է հետին պլանում, հեռանկար չեն տեսնում, բավարարված են իրենց ապրուստը վերը նշված և գյուղատնտեսական աշխատանքներով քիչ թե շատ ապահովելով: Իսկ հայերենով ուսուցմամբ դասարանների սովորողները, հիմնականում ուսումը շարունակում են միջին մասնագիտական կրթօջախներում:

Ուստարի	Ընդունված սովորողների թիվ	Ավարտած սովորողների թիվ	Բուհ ընդունված սովորողների թիվ
2020-2021	9	4	2
2021-2022	19	1	1
2022-2023	19	1	-

**Դ. 12-րդ դասարանների սովորողների ավարտական քննությունների արդյունքները
վերջին 3 տարում**

2020-2021 ուստարի 4 շրջանավարտ հայերենով ուսուց. դաս.-1 սովորող ռուսերենով ուսուց. դաս.-1 սովորող					2021-2022 ուստարի 1 շրջանավարտ հայերենով ուսուց. դաս.-1 սովորող	2022-2023 ուստարի 1 շրջանավարտ ռուսերենով ուսուց. դաս.-1 սովորող
Հայոց լ.	13	12	12	-	12	10
Մաթեմ.	12	14	14	12	10	10
Ռուսաց լ.	14	16	16	14	12	10
Հայոց պատմ.	13	12	14	-	9	10
Միջինը	13	13.5	14	13	10.75	10

Ծանոթություն. 12-րդ դասարանի սովորողներից Էրիկ Սարգսյանը 2020-21 ուստարվա 2-րդ կիսամյակում է ընդունվել դպրոց: Ընտանիքը ՌԴ-ից էր տեղափոխվել Հայաստան և «Հայոց լեզու», «Հայոց պատմություն» առարկաները չի ուսումնասիրել:

12-րդ դասարանի սովորողներին վերաբերող տվյալների վերլուծությունից պարզ է դառնում, որ առաջադիմության և սովորողների քանակի նվազման միտում կա, թեև, ավագ դպրոցում ուսումնառությունը շարունակում են հիմնականում կրթությունը կարևորող աշակերտները:

2023-24 ուստարում ևս 12-րդ դասարանը կավարտի միայն 1 սովորող /հայերենով ուսուցմամբ դասարան/:

2.9. Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծություն

Արդեն տարբեր տեսանկյուններից խոսել ենք համայնքի և բնակչության առանձնահատկությունների մասին: Դպրոցում կողք կողքի սովորում են ազգությամբ հայ, ռուս և եզդի երեխաներ: Տնօրենության և վարչատնտեսական կազմի տարիների համատեղ և հետևողական աշխատանքի արդյունքում դպրոցում այսօր արդեն չկան ազգամիջյան կոնֆլիկտներ, տարաձայնություններ: Թեև յուրաքանչյուր ազգի ներկայացուցիչ իր լեզվի, մշակույթի, կրոնական հավատի և ազգային ավանդույթների կրողն է, բայց կրթօջախում հնարավոր է դարձել միասնական միջավայրի ստեղծումը՝ սովորելու, կրթվելու և դաստիարակություն ստանալու համար: Այսպիսով՝ դպրոցում ունենք բազմազգ, բայց ինտեգրված աշակերտական համայնք: Դեռևս ներառական կրթությունը, համընդհանուր ներառականությունը չէր ներդրվել հանրակրթության ոլորտում, մեր դպրոցում արդեն ունեինք հենաշարժողական, մտավոր, լսողության խնդիրներով սովորողներ: Այս համայնքի ընտանիքները ռեսուրս և ժամանակ չէին ծախսում ԿԱՊԿ ունեցող երեխաներին հատուկ դպրոցներում կամ կենտրոններում կրթության ուղարկելու համար, քանի որ ընդհանրապես չեն կարևորում կրթությունը, առավել ևս ԿԱՊԿ ունեցող երեխաների կրթությունը:

Դպրոցը, չունենալով հարմարեցումներ, պատրաստ չլինելով աշխատել այս երեխաների հետ, բայց իմանալով համայնքի առանձնահատկությունները, գիտակցելով և կարևորելով ԿԱՊԿ ունեցող երեխաների կրթությունն ու ինտեգրումը, պատրաստակամորեն, բոլոր ժամանակներում ընդունել է համայնքի ԿԱՊԿ ունեցող երեխաներին: Մանկավարժական կոլեկտիվը, չունենալով փորձ ու հմտություններ, կարողացավ ներառել այդ աշակերտներին կրթական միջավայրում, ապահովել նրանց սոցիալականացումը:

Քայլ առ քայլ սովորեցինք բազմաբնույթ առանձնահատկություններ ունեցող աշակերտների հետ աշխատելու հոգեբանական, ուսուցման, ինտեգրման, շահերի և առողջության պաշտպանության հմտություններ, թիմային աշխատանքով հաղթահարեցինք բազում դժվարություններ՝ մեր պրակտիկայի հիման վրա, ինչպես նաև ուսումնասիրեցինք, ծանոթացանք այլ կրթօջախների մանկավարժների արդեն ունեցած հմտություններին, տարբեր ձևաչափերով խորհրդատվություններ ստացանք նեղ մասնագետներից:

Եվ, երբ ներդրվեց համընդհանուր ներառականությունը՝ որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի երաշխիք,

մեր ուսուցիչներն արդեն լուրջ փորձառություն ունեն այս առումով և գործընթացը շատ հեշտ դրվեց արդեն սահմանված նորմատիվներով ուղղորդվող ռելսերի վրա: Այժմ դպրոցում սովորում է ԿԱՊԿ ունեցող 5 աշակերտ. նրանց կրթությունն արդյունավետ իրականացնելու համար ուսուցիչները ԱՌԻՊ են կազմում, շաբաթական մեկ օր այս սովորողների հետ աշխատում են տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի աշխատակիցները: Տարիների այս փորձառությունը դրական է անդրադարձել նաև աշակերտների շփումների, հարաբերությունների, նրանց սոցիալականացման և ինտեգրման գործընթացների վրա:

Համայնքի առանձնահատկությունները նաև դրական կողմ ունեն: Այստեղ գրեթե բացառված են բուլլինգի դեպքերը, թեև այդ նպատակի համար ևս անընդհատական աշխատանք է իրականացվում: Վնասակար երևույթների /ալկոհոլի, ծխելու, հոգեմետ դեղերի օգտագործման, թմրամոլության, բռնության դեպքերի/ բացառման նպատակով ևս անընդհատական աշխատանք է իրականացվում, որը նպաստում է նաև սովորողների առողջ ապրելակերպ վարելուն: Թեև ոստիկանության համապատասխան բաժինների ներկայացուցիչները ռուսերենի թույլ կամ վատ իմացության պատճառով այնքան էլ հաճախ չեն գալիս հանդիպումների, բայց դպրոցը փորձում է աջակցել, ուսուցիչները հանդես են գալիս որպես թարգմանիչներ, նման հանդիպումները ռուս աշակերտների շրջանում, որն, ի դեպ, ավելի քան անհրաժեշտ է, արդյունավետ դարձնելու նպատակով: Չնայած այն բանին, որ համայնքում հատկապես ալկոհոլի չարաշահումը տարածված երևույթ է, ուսուցչական կոլեկտիվի ջանքերով և հետևողական միջոցառումների շնորհիվ, դպրոցում նման դեպքեր վերջին տարիներին չեն գրանցվել:

Կարևորվում է անչափահասի առողջ ապրելակերպն ու ձևավորվող օրգանիզմի առողջ աճը, որին նպաստում են «Տար սնունդ» ծրագիրը, «Առողջ ապրելակերպ» առարկայի և բոլոր դասարաններում դասողեկական ժամերին այդ թեմայով իրականացվող աշխատանքներն ու բազմաբնույթ միջոցառումները:

Հատկապես ՄԿԱ գծով համակարգողի և դասղեկների կողմից առանձնահատուկ աշխատանք է իրականացվում կոմպլեքսներ ունեցող, մեկուսացող, տնտեսապես առանձնացված սոցիալապես խոցելի խմբերի ընտանիքների սովորողների համընդհանուր ներառման, նրանց սոցիալականացման ուղղությամբ:

Կարևորում են վարչատնտեսական կազմի, ուսուցիչների, ծնողների, աշակերտների պատրաստակամությունը դիտարկելու համընդհանուր ներառականության ներդրման առաջնահերթությունները և դրանց խոչընդոտող հանգամանքները, փոխադարձ հարգանքը և հավատը՝ ԿԱՊԿ ունեցող սովորողների հմտությունների ձեռքբերման հանդեպ:

Այս բոլոր աշխատանքներում հաջողելու համար շատ կարևոր է տնօրենի, Տնօրենի ՈւՊ տեղակալի, ՄԿԱ /Մասնագիտացված կրթական աջակցությունների/ զծով համակարգողի, ՏՄԱԿ, ՀՄԿ, ՄԱԾ խմբի, պատասխանատու այլ կառույցների, հասարակական կազմակերպությունների ակտիվ և բազմակողմանի համգործակցությունը:

N	Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1.	Դպրոցում կողք կողքի կրթվում, դաստիարակվում, հաղորդակցվում և բարոյահոգեբանական ջերմ մթնոլորտում սովորում են հայ, ռուս և եզդի երեխաներ, այդ թվում և ԿԱՊԿ ունեցող սովորողներ. Դպրոցում բացառված է, չկան խտրական վերաբերմունքի տարրեր. /լեզվի, կրոնի, ավանդույթների, հագուստի, մշակույթի և այլն/.	ԿԱՊԿ ունեցող սովորողների համար դպրոցում բացակայում են անհրաժեշտ հարմարեցումները
2.	ԿԱՊԿ ունեցող սովորողները մշտապես գտնվում են աշխատակազմի և դասընկերների, աշակերտների ուշադրության կենտրոնում	ԿԱՊԿ ունեցող աշակերտների համար դպրոցում չկա ռեսուրս-սենյակ
3.	Ուսուցիչների հիմանական մասը /բացառությամբ վերջին 3 տարիներին աշխատանքի ընդունված 6 ուսուցիչների/, անցել են նաև ներառական կրթությանը վերաբերող վերապատրաստումներ.	Դպրոցը չունի ԿԱՊԿ ունեցող աշակերտների համար դիդակտիկ նյութեր
4.	Աշակերտական խորհուրդն ընտրվում է ընտրական կարգի նորմերին համապատասխան. կազմակերպիչները հաշվի են առնում ընտրության կարգին վերաբերող բոլոր դետալները	Աշակերտները մեծ ոգևորությամբ են մասնակցում միայն ԱԽ-ի ընտրական գործընթացին. ԱԽ-ը գրեթե չի գործում. պակասում է նախաձեռնողականությունը,

	/ընտրարշավ, լոռայան օր, ընտրական գործընթաց, հանձնաժողով, փակ գաղտնի քվեարկություն, ընտրատեղամասերում կուտակումների բացառում և այլն/.	սովորողների ինքնուրույն և կրեատիվ մտածողությունը.
5.	Ուսումնական գործընթացի գաղափարախոսություններից է՝ «Մարդը բարձրագույն արժեք է», յուրաքանչյուր ոք ունի իրավունքներ և պարտականություններ, խրախուսվում է խոսքի ազատությունը, այլակարծությունը.	Կրթության հանդեպ անտարբերության մթնոլորտ. Հաճախ, ավելի շատ բարձրաձայնվում են իրավունքները՝ մոռանալով պարտականությունների մասին, և կամ անտեսվում է՝ «Իմ իրավունքներն ավարտվում են այնտեղ, որտեղ սկսվում են ուրիշի իրավունքները» կանոնը.
6.	Կազմակերպվում են հետաքրքիր և բազմաբովանդակ արտադասարանական միջոցառումներ	Ծնողներն արգելում են երեխաներին դասերից հետո մասնակցել տարբեր միջոցառումների՝ կենցաղային, տնային գործերով զբաղված, ծանրաբեռնված լինելու պատճառով.
7.	Բացառված են բուլլինգի դեպքերը. այս ուղղությամբ անընդհատական աշխատանք է իրականացվում.	
8.	Դասղեկները առանձնահատուկ աշխատանք են իրականացնում մեկուսացող բնավորություն ունեցող սովորողների հետ	Ծնողները չեն կարևորում իրենց երեխաների սոցիալականացման, սոցիումում ինտեգրման դերը
9.	Կազմակերպվում են վնասակար երևույթների /ակոհոլի, ծխելու, հոգեմետ դեղերի օգտագործման, թմրամոլության, բռնության դեպքերի/ բացառման նպատակով բազմաբնույթ միջոցառումներ.	Հանդիպումներին հրավիրված ուսուցիչները հիմնականում չեն տիրապետում ռուսաց լեզվին.

10.	Կազմակերպվում են առողջ ապրելակերպին, մարդու առողջությանը նվիրված բազմաբնույթ միջոցառումներ	Երեխան մնում է երեխա, իսկ նրանց առողջ ապրելակերպին, ճիշտ սնվելուն, վնասակար երևույթների բացառմանը նպաստող հետևողականություն չկա ծնողների կողմից
-----	--	---

2.10. Ուսումնական հաստատության աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորություններ

Դպրոցը խրախուսում է ուսուցիչների անընդհատական ինքնակրթությունը, անհրաժեշտ գիտելիքներով և ուսուցման նոր գործիքակազմերի ներդրումը: Տնօրենությունը պատրաստակամություն է դրսևորում աշխատակազմի անընդհատական կրթության, վերապատրաստումների, ոչ ֆորմալ հանդիպում-դասընթացների մասնակցությանն աջակցելու համար՝ ընդհուպ մինչև արտերկրում վերապատրաստումներ /Գերմանիայում վերապատրաստումներ անցած ուսուցիչ ունենք/: Ուսուցիչներն իրենց ձեռքբերումներով կիսվում են, փոխանցում միմյանց: 2023թ. հունվար ամսվա դրությամբ մաթեմատիկայի սկսնակ ուսուցիչը մասնակցում է «Մանկավարժի հավաստագրման 30 կրեդիտ տրամադրող մանկավարժահոգեբանական և ուսումնամեթոդական հմտություններ ապահովող ծրագիր /մոդուլ/» դասընթացին՝ համապատասխան կրեդիտներ հավաքելու նպատակով: Ամեն տարի որոշակի թվով ուսուցիչներ մասնակցում են պարտադիր ատեստացիայի, անցնում են վերապատրաստման դասընթացներ:

2023թ. -ի հոկտեմբերին ֆիզկուլտուրայի ուսուցիչը մասնակցել է կամավոր ատեստավորմանը և ցուցաբերել 67 միավոր արդյունք:

2024թ. հունվարից դպրոցն ունի մենթոր ուսուցիչ և սեմինարներին մասնակցում են ոչ միայն ուսուցիչները, այլև տնօրենի տեղակալներն ու նաև ես՝ որպես տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար: Այսինքն, տնօրենությունն օրինակ է ծառայում, խրախուսելով անընդհատական ինքնակրթությունը, նորարարությունների ճիշտ, տեղին և նպատակային կիրառումը:

Կարևորում են ուսուցիչների հաջողությունների խրախուսումը տարբեր ձևաչափերով՝ պատվոգիր, շնորհակալագիր, պարգև,

դրամական խրախուսանք և այլն: Բացի այն, որ սա կարևոր խթան կարող է հանդիսանալ տվյալ ուսուցչի համար, նաև, որպես հրաշալի օրինակ՝ կնպաստի առողջ մրցակցության ձևավորմանը, որը կրթական ծրագրերի, ուսումնական հաստատության զարգացման և առաջընթացի կարևորագույն շարժիչ ուժ է:

N	Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
1.	Դպրոցում կարևորվում է թիմային աշխատանքը.	Որոշ ուսուցիչներ չեն կարևորում իրենց ակտիվ մասնակցությունն ու ներգրավվածությունը տարբեր միջոցառումներին.
2.	Տնօրենության նախաձեռնողականություն՝ ուսուցիչներին նորարական գաղափարներով զինելու. /անընդհատ սովորում ենք, որ սովորեցնենք սովորել/.	Ուսուցչական համակազմի արժևորման, խրախուսման, լավագույններին պարգևատրելու կարգի, ավանդույթների բացակայություն. Մասնագիտական վերապատրաստումների համար դպրոցի բյուջեով նախատեսված գումարների սակավություն.
3.	Դպրոցում աշխատում է կամավոր ատեստավորում անցած 1 ուսուցիչ	Ուսուցիչների մոտ գրեթե բացակայում է կամավոր ատեստավորմանը մասնակցելու ցանկությունը. նախկինում տարակարգ ունեցող ուսուցիչը, 5 տարին լրանալուց հետո այլևս չդիմեց նորից ստանալու համար
4.	Դպրոցում աշխատում է արտերկրում վերապատրաստում անցած 1 ուսուցիչ	Ուսումնական հաստատությունը հնարավորություն չունի հոգալ՝ իր ուսուցչի՝ նմանատիպ գործուղումների և կրթության համար պահանջվող ծախսերը
5.	Փորձառու ուսուցիչների կողմից աջակցություն՝ սկսնակներին.	Կադրերի պակաս. Ուսուցիչների մեծ մասը դրույքաչափից ավելի

		ճանրաբեռնվածություն ունի, որը խանգարում է ինքնակրթությանը բավարար ժամանակ հատկացնելուն.
6.	Ուսուցիչներն իրենց նախաձեռնությամբ մասնակցում են տարբեր կրթական դասընթացների	Ոչ բոլոր ուսուցիչներն են հանդես բերում նախաձեռնողականություն՝ ինքնակրթության տարբեր ուղիներ գտնելու նպատակով
7.	Ուսուցիչների կարիքների վերլուծություն	Ծնողների և աշակերտների անհարգալից վերաբերմունք դպրոցի և ուսուցիչների հանդեպ

2.11. Ուսումնական նպատակով կատարված ծախսերի վերլուծություն

Դպրոցի ծախսերի վերլուծությունն իրականացրել են 2020-2023թթ. կտրվածքով:

Դպրոցի ֆինանսավորումն իրականացվում է բացառապես պետբյուջեի միջոցներից: Վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ ընդհանուր բյուջեի գերակշիռ մասը բաժին է ընկնում աշխատավարձերին: Այստեղ, աշակերտ-թվով ֆինանսավորման հետ կապված, տարիներ շարունակ կարևոր դերակատարություն է ունեցել և դպրոցի համար ֆինանսական խնդիրներ է առաջացրել հայերենով ուսուցմամբ թերձանրաբեռնված դասարանների հարցը: Այժմ արդեն ֆինանսավորման նոր կարգն իր հետ նոր փոփոխություններ է բերում, որը կօգտագործվի ի նպաստ դպրոցի բազմակողմանի առաջընթացի և զարգացման: Դպրոցի և կրթական այլ կարիքների ծախսերը, նախորդ 3 տարիների վերլուծությամբ, ցածր տոկոսայնություն ունեն: Դպրոցի 2023թ. բյուջետային միջոցների ծախսերը՝ տոկոսային արտահայտությամբ.

- Աշխատավարձերի վճարման գծով տարեկան ծախսերի չափը -88,1 %
 - Կոմունալ վճարների գծով տարեկան ծախսերի չափ- 3,6%
 - Գրենական պիտույքների և դիդակտիկ պարագաների համար նախատեսված ֆինանսներ – 0,1 %
 - Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայությունների ծախսը կազմել է բյուջեի ընդամենը 0,14 տոկոսը:
- Չեն եղել մրցութային հավելավճարներ, բարեգործական աջակցություններ, դրամաշնորհային ծրագրեր, դպրոցը սոցիալ-ձեռնարկատիրական գործունեություն չի իրականացնում:

N	Ծախսեր	2021թ.	2022թ.	2023թ.	Տեակարար կշիռն ընդհանուր ծախսերում		
					2021թ.	2022թ.	2023թ.
	Ֆինանսավորումը պետական բյուջեից	52892,7	52782,0	66290,8			
1	Աշխատողների աշխատավարձեր	43494,4	43714,8	51895,1	89,3	83,9	88,1
2	Էներգետիկ ծառայություններ	2101,7	2222,6	2136,9	4,3	4,3	3,6
3	Կապի ծառայություններ	60,7	62,5	62,5	0,1	0,1	0,1
4	Այլ տրանսպորտային ծախսեր	1498,9	1492,8	1344,1	3,1	2,9	2,3
5	Համակարգչային ծառայություններ	0,0	95,0	95,0	0,0	0,2	0,2
6	Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություն.	89,6	144,0	96	0,2	0,3	0,2
7	Տեղեկատվական ծառայություններ	116,0	45	64,3	0,2	0,1	0,1
8	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	15,0	935,0	393	0,0	1,8	0,7
9	Մասնագիտական ծառայություններ	357,8	1270,2	255,7	0,7	2,4	0,4
10	Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	359,0	1524,1	998,3	0,7	2,9	1,7
11	Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	31,0	12	155,9	0,1	0,0	0,3
12	Գրասենյակային նյութեր և հագուստ	30,8	67,4	45,8	0,1	0,1	0,1
13	Կենցաղային և հանրային սննդի նյութեր	120,9	281,5	1213,1	0,2	0,5	2,1
14	Հատուկ նպատակային այլ նյութեր	0	0		0,0	0,0	0,0
15	Պարտադիր վճարներ	142,0	120,3	119,2	0,3	0,2	0,2
16	Ոչ նյութական ակտիվներ	285,0	0	0	0,6	0,0	0,0
17	Վարչական սարքավորումներ	0,0	100	0	0,0	0,2	0,0
	Ընդամենը	48702,8	52087,2	58874,9	100%	100%	100%

N	Ցուցանիշ	2023թ.
1.	Սովորող-ուսուցիչ հարաբերակցություն	8.4
2.	Սովորող-սպասարկող անձնակազմ հարաբերակցություն	14.6
3.	Հայերենով ուսուցմամբ դասարանների միջին խտությունը	5
4.	Ռուսերենով ուսուցմամբ դասարանների միջին խտությունը	13.1
5.	Ընդհանուր դասարանների միջին խտությունը	10.1
6.	1 սովորողի հաշվով տարեկան միջին ծախսը	411.7

2.12. Հաստատությունում առկա հիմնախնդիրները

Ուսումնական հաստատության հիմնախնդիրը ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացումն է, սովորողի մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացումը, մասնագիտական կողմնորոշումը, քաղաքացիական գիտակցության կարևորումը, արժանապատվության, հայրենասիրության, աշխատասիրության, պատասխանատվության, գաղափարների դաստիարակության, մտահորիզոնի և լայն աշխարհայացքի ձևավորումը, որի ճանապարհին պետք է հստակ քայլեր ձեռնարկվեն պարտուսից դուրս մնացած աշակերտներին դպրոց վերադարձնելու, դպրոց-ծնող կապը ամրապնդելու, ուսումնական գործընթացը հետաքրիր դարձնելու, կրթության հանդեպ մոտիվացիա առաջացնելու ուղղությամբ: Դպրոցն իր առաջն նպատակ է դրել զարգացնել ժամանակակից կյանքի պահանջներին համընթաց շարժվելու կարողունակությունները, գիտելիքը գործնականում կիրառելու հմտությունները, ուսումնառությունը, դպրոցը և գիտելիքը գնահատելու և արժևորելու կարևորությունը:

Այս քայլերը գործողություն դարձնելն ու իրականացնելն են դրել դպրոցի զարգացման ծրագրի հիմքում, որոնք կյանքի կոչելու համար կարևորում են դպրոցում բարոյահոգեբանական մթնոլորտի կայունությունը, ուսուցիչների մոտիվացիայի և ինքնակրթության ցանկության խթանումը, ՏՀՏ-ների կիրառման կարողությունների և հմտությունների զարգացումը:

Դպրոցն ուսումնամեթոդական և նյութատեխնիկական բազայով հարստացնելը, դպրոցի ներսի և դրսի հարդարման մեջ հետաքրքիր և նպատակային փոփոխություններ կիրառելը, որի անմիջական մասնակիցը պետք է դարձնել ոչ միայն սովորողներին, այլև ծնողներին՝ ձևավորելով մասնակցային կառավարման հմտություններ նաև:

Դպրոցի կարիքները

Բազմակողմանի ուսումնասիրության, ՄԻՄ-ի, ՕԻՄ-ի և ԱԻՄ-ի հանդիպումների արդյունքում գնահատվել և վեր են հանվել դպրոցի կարիքները.

Դպրոցի շենքը տիպային չէ և ուղղակի հարմարեցված է ուսումնական գործընթացը կազմակերպելու համար: Եվ, ինչպես արդեն դպրոցի կարիքների մեջ նշել եմ, դպրոցը չունի լաբորատորիաներ, համակարգչային և SMART սենյակներ, «Շախմատ» առարկայի դասասենյակ, ԿԱՊԿ ունեցող աշակերտների համար ռեսուրս սենյակ, հանդիսությունների դահլիճ: Դպրոցում հայերենով ուսուցմամբ դասարաններում ուսուցումը կազմակերպվում է բազմահամակազմ դասարաններով: Նոր ՀՊԶ-ների ներդրման պահանջով, աստիճանաբար այլևս չի կիրառվելու նաև բազմահամակազմ դասարաններով ուսուցումը: Մա նշանակում է, որ տարեցտարի դպրոցը կունենա նաև դասասենյակների պակաս: Մանկավարժական խորհրդի հանդիպման ժամանակ առաջարկություն եղավ դպրոցի նոր մասնաշենք կառուցելու մասին: Եվ, եթե ուզում ենք ունենալ մրցունակ դպրոց և որակյալ կրթություն, պետք է նաև ունենալ, ստեղծել ուսուցման համար հարմարավետ և ապահով միջավայր:

Կառավարման ոլորտ և ուսումնադաստիարակչական աշխատանքներ.

1. Դպրոցում բարոյահոգեբանական դրական մթնոլորտի ապահովում.
2. Դպրոց-համայնք համագործակցության ակտիվացում.
3. Դպրոց-ծնող կապի ամրապնդում.
4. Հանրակրթության նոր չափորոշիչների իրականացմանը նպաստող միջոցառումների և միջավայրի ապահովում.
5. Մանկավարժների ինքնակրթությունը խթանող և դրա համար նպաստավոր պայմանների ստեղծում.
6. Մանկավարժների համագործակցություն այլ կրթօջախների ուսուցիչների հետ.
7. Հեռավար համատեղ դասերի կազմակերպում գործընկեր դպրոցների հետ.
8. Հեռավար էքսկուրսիաների կազմակերպում /օն-լայն միացում թանգարաններ, պատկերասրահներ, գործարաններ/.

9. Ուսուցանվող նյութի, գիտելիքի գործնական կիրառության մոդելի ներդրում.
10. Արտադասարանական միջոցառումների ակտիվացում.
11. Սովորողների կրթության իրավունքի իրացման ապահովում.
12. Պարտուսից դուրս մնացած աշակերտների և նրանց ընտանիքների հետ բազմակողմանի աշխատանքի կազմակերպում.
13. Սովորողների մասնագիտական կողմնորոշմանը նպաստող միջոցառումների կազմակերպում.
14. Նախագծային աշխատանքների ընտրություն՝ ըստ համայնքի առանձնահատկությունների և ժամանակակից պահանջների մրցունակության.
15. Երկարօրյաների կազմակերպում.
16. Խմբակների արդյունավետ գործունեության ապահովում.
17. Դպրոցը մանկավարժներով համալրում.

Վարչատնտեսական գործունեություն.

1. Դպրոցը անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով համալրում.
2. Կրթական ոլորտի դրամաշնորհների և ֆինանսական այլ հնարավորությունների հայթայթում.
3. Դպրոցի շենքի և տարածքի բարեկարգման աշխատանքների կազմակերպում.

Դպրոցի կրթադաստիարակական գործունեություն ծավալելու հնարավորություններն ու համապատասխանությունը Ա Դպրոցի համապատասխանությունը պետության կրթական քաղաքականությանը.

Դպրոցի զարգացման ծրագիրը կազմելիս առաջնորդվել եմ դպրոցի գործունեությունը կանոնակարգող ներքոնշյալ իրավական ակտերով.

1. ՀՀ Սահմանադրություն
2. «Կրթության մասին» ՀՀ օրենք
3. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք
4. «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք
5. «Հանրակրթական պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն
6. «Լեզվի մասին» ՀՀ օրենքը

8. «Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների ապահովման մասին» Կոնվենցիա /10.01.1997/
7. Հանրակրթության ոլորտը կարգավորող կարգեր
9. Էլեկտրոնային հարթակներ (e-draft.am, arlis.am, egov.am և այլն)

Ա. Շենք-շինության հնարավորությունները.

Ի սկզբանե նշել եմ, որ դպրոցի շենքը տիպային չէ: Այն կառուցվել է որպես զինվորական հիվանդանոց /հոսպիտալ/: 1958թ.-ից հոսպիտալի շենքում սկսել է գործել դպրոցը: Շենքի ընդհանուր մակերեսը կազմում է 1672,16 քառ/մ, իսկ հողամասի մակերեսը 3 877 քառ/մ: Դպրոցի մուտքի մոտ կառուցված է թեքահարթակ, բայց դպրոցը չունի հենաշարժողական խնդիրներ ունեցող սովորողների համար հարմարեցումներ:

Դպրոցն ունի 2 սանհանգույց՝ առանձնացված աղջիկների և տղաների համար: Անձնակազմի համար առանձնացված սանհանգույց չկա:

Չկա բուժկետ կամ բժշկական անկյուն:

Դպրոցը չունի առարկայական կաբինետներ, լաբորատորիաներ, գործում է միայն «Արմաթ» լաբորատորիան:

Արհեստանոցը չունի աշխատանքի համար սարքավորումներ, տարրական գործիքներ:

Դպրոցը չունի հանդիսությունների դահլիճ:

Տարրական դպրոցի թվով 55-ից 47 աշակերտ օգտվում է «Տաք սնունդ» ծրագրից:

Դպրոցում գործում է լոկալ ջեռուցում, բայց կաթսայատան 2 կաթսաներն էլ /ըստ մասնագետների/ նորով փոխարինելու խիստ անհրաժեշտություն կա:

Մինչև 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում նոր չափորոշիչների ներդրումը /2023թ. սեպտեմբեր/, հայերենով ուսուցմամբ բոլոր դասարանները բազմահամակազմ էին: Նոր չափորոշիչների ներդրմամբ պայմանավորված՝ 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններն առանձնացվել են: Սա իր հետ առաջ է բերել նոր խնդիրներ՝ թե՛ մասնագետների, թե՛ դասասենյակների պակաս է զգացվում, որն ամեն տարի ավելի զգալի է դառնալու, քանի որ հաջորդ տարի, նոր չափորոշչային պահանջները բավարարելու համար անհրաժեշտություն կառաջանա առանձնացնել ևս 3 դասարան, մյուս տարի ևս 3, մինչև բոլոր դասարաններում կներդրվեն նոր ՀՊՉ-ները: Այստեղ, որպես լուծում, գտնում եմ, որ մեծ դասասենյակները կիսելու անհրաժեշտություն կառաջանա:

Մրանք դպրոցի կարիքների հիմնական առաջնահերթություններն են:

Բ. Մարդկային ռեսուրսներ

N	Հաստիքի անվանումը	Դրույքաչափը
1.	Տնօրեն	1
2.	Տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ	1
3.	Տնօրենի մասնագիտական և կրթական աջակցությունների գծով տեղակալ	0,75
4.	Զինղեկ	1
5.	Ուսուցիչ	24,5
6.	Ուսուցչի օգնական	1
7.	Օպերատոր	1
8.	Գրադարանավար	0,5
9.	Հաշվապահ	1
10.	Հավաքարար	2
11.	Պահակ	3
12.	Տնտեսվար	1
13.	Հնոցապան	1
14.	Խոհարար	0,5
	Ընդամենը	15,75

3. Հաստատության գործունեության նպատակն ու խնդիրները.

Նպատակ

Դպրոցի զարգացման ծրագիրը մշակելիս իմ առջև նպատակ եմ դրել առաջիկա 5 տարիների՝ 2024-2029թթ. ընթացքում քայլ առ քայլ մոտենալ ժամանակակից կրթական մարտահրավերների պահանջների իրագործմանը, նպաստել կրթօջախի զարգացմանը, նոր ՀՊԶ-ների արդյունավետ ներդրմանն ու կիրառմանը և ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանն ու մրցունակությանը:

Նպատակ 1. Հաստատության շենքային պայմանների բարելավում, նյութատեխնիկական բազայի համալրում.

Նպատակ 2. Բարձրացնել սովորողների կրթական մոտիվացիան և հետաքրքրությունը դեպի ուսումնառությունը.

Նպատակ 3. Բարձրացնել ներդպրոցական վերահսկողության իրականացման արդյունավետությունը.

Նպատակ 4. Մանկավարժական անձնակազմի կարողությունների զարգացում և Տեղեկատվական տեխնոլոգիաների, ստեղծագործական մոտեցումների և նորարարությունների կիրառում

Խնդիրներ.

1. Շենքային պայմանների բարելավում.

2. Նյութատեխնիկական բազայի նորացում, հարստացում.

3. Պարտուսից դուրս մնացած աշակերտների թվի կրճատում /յուրաքանչյուր տարի այդ թիվը պակասեցնել նվազագույնը՝ 2-3-5-7-10-ով/. /Նոր չափորոշիչներով աշխատանքը հնարավորություն է տալիս հաջորդ դասարան փոխադրել նաև 1-3 նիշ ունեցող սովորողներին. սա լավ հնարավորություն է հատկապես մոլոկան ընտանիքների երեխաներին սկզբնական շրջանում ուղղակի դպրոցում պահելու, հետո արդեն ըստ նրանց հետաքրքրությունների որոշ առարկաների հանդեպ յուրահատուկ վերաբերմունք ձևավորելու, որպես «ազատ ունկնդիր» ուսումնական գործընթացին ներկա գտնվելու, դասը լսելու համար: Այս աշակերտները, եթե նույնիսկ առարկայական խոր գիտելիքներ չստանան, գոնե ներգրավված կլինեն կրթադաստիարակչական գործընթացներում, որն առաջնային և կարևոր դերակատարություն ունի անձի ձևավորման գործում:

2. Մանկավարժների մասնագիտական որակների աճի, մոտիվացիայի, նորարարական գաղափարների խթանում.

5. Ուսուցիչ-ծնող-աշակերտ-համայնք կապի ամրապնդում.
6. Խորհրդակցական մարմինների հետ համագործակցության ամրապնդում.

Գործողություններ.

1. Կրթության հանդեպ հետաքրքրության բարձրացում.
 - 1.1. Պարտուսից դուրս մնացած անչափահասների կարիքների բազմակողմանի գնահատում.
 - 1.2. Կրթությունը չկարևորող ընտանիքների ու նրանց երեխաների հետ անհատական և նորարարական մեթոդներով աշխատելու հմտությունների և կարողությունների ձևավորում, մշակում և կիրառում.
 - 1.3. Գիտելիքը գործնականում կիրառելու հմտությունների զարգացում.
 - 1.4. Մասնագիտական կողմնորոշման հմտությունների ձևավորում.
 - 1.5. Ժամանակի պահանջներին համապատասխան մրցունակ քաղաքացու ձևավորում.

2. Ուսուցիչների կարողությունների զարգացում.

- 2.1. Մշակել «Տարվա լավագույն ուսուցիչ» խրախուսական կարգի չափանիշներ և խրախուսանքի արժանացնել լավագույն ուսուցչին:
- 2.2. Ուսուցիչների ինքնակրթության խթանում.
- 2.3. Փորձի փոխանակման միջոցառումներ/ներդպրոցական և արտադպրոցական/.
- 2.4. Կամավոր ատեստավորման մասնակցության խթանում.
- 2.5. Ուսումնական գործընթացում Տեղեկատվական տեխնոլոգիաների ակտիվ կիրառում.
- 2.6. Ստեղծագործական մոտեցումների և նորարարությունների կիրառում.

3. Շենքային պայմաններ.

- 3.1. Կաթսայատան նորացում. 2 նոր կաթսաներով վերազինում
- 3.2. Սանհանգույցների գույքի վերանորոգում, փոխարինում. հարմարեցում ԿԱՊԿ ունեցող սովորողներին.
- 3.3. Դասասենյակների վերանորոգում.
- 3.4. Սպորտդահլիճի հատակի վերանորոգում.
- 3.5. Սպորտդահլիճի հանդերձարանների կահավորում.
- 3.7. Դպրոցի տանիքի մասնակի վերանորոգում.

- 3.8. Դպրոցի բակի բարեկարգում.
- 3.9. Խաղահրապարակի բարեկարգում և կահավորում.
- 3.10. Փայտե հին պատուհանների փոխարինում մետաղական շրջանակներ ունեցող պատուհաններով.
- 3.11. Դպրոցի նկուղային հարկում ապաստարանի հարմարեցումների ստեղծում, կահավորում.
- 3.12. Հակահրդեհային ավտոմատ ազդանշանի կամ հրդեհաշիջման համակարգի տեղադրում.
- 3.13. Բուժկետի անկյունի ստեղծում.
- 3.14. Գրատախտակների ձեռքբերում.
- 3.15. Աշակերտական գույքի նորացում, վերազինում.
- 3.16. Շարժական ինտերնետի ձեռքբերում.
- 3.17. ՏՀՏ ժամանակակից սարքավորումների ձեռքբերում.
- 3.18. Գրադարանի համալրում.
- 3.19. Նյութատեխնիկական բազայի, լաբորատոր սարքավորումների և նյութերի համալրում.
- 3.20. Դպրոցի ներքին և արտաքին հատվածներում տեսախցիկների տեղադրում.

Ռիսկեր.

Ծրագրի նպատակներին հասնելու համար առկա խնդիրները լուծելու և պահանջվող գործողություններն իրականացնելու ճանապարհին անխոչընդոտ չի լինելու.

1. Ուսման նկատմամբ համատարած անտարբերություն
2. Դասասենյակների պակաս
3. Պարտուսից դուրս մնացած աշակերտներ
4. Համայնքում գերակշռող ազգային փոքրամասնությունների կրոնական ծայրահեղ պահպանողականություն և ազգային առանձնահատկություններ.
5. Որակյան մանկավարժական կադրերի պակաս
6. Համայնքի առանձնահատկություններով և կարծրատիպերով պայմանավորված՝ ուսուցիչների արտագաղթ դպրոցից.
4. Արտակարգ իրավիճակներով /համաճարակ, պատերազմ և այլն/ պայմանավորված խոչընդոտներ.
5. Արտաբյուջետային միջոցների բացակայություն. Ֆինանսական միջոցների պակաս. անբավարար ֆինանսական հնարավորություններ.

Ռիսկերը մեղմացնող գործողություններ.

Փնտրել և գտնել հովանավորներ, դոնոր կազմակերպություններ. /օրինակ, Ճապոնիայի դեսպանատունը կրթության աջակցման դրամաշնորհային ծրագրեր ունի/.

Նշված գործողություններն ակնհայտ մեծ ֆինանսական ռեսուրսներ են պահանջում և ըստ ուսումնական հաստատության կառավարման նոր կարգի այս գործողությունները հիմնականում դպրոցի ֆինանսատնտեսական համակարգողի իրավասության տակ են ընկնում, բայց, հաշվի առնելով համայնքի առանձնահատկությունները, ինչպես նաև այն հանգամանքը, որ դպրոցի շենքը տիպային չէ և հենց դրանից սկսվող բազմաթիվ իրար շաղկապված խնդիրներ կան, տարիների փորձառությունը ցույց է տալիս, որ համայնքի աջակցությունն ակնկալելն անիմաստ է, խնդրի լուծումը տեսնում եմ թիմային աշխատանքի մեջ և հարկ եմ համարում նշել, որ կարևորում եմ համակարգողին մեր աջակցությունը՝ դոնորներ, լրացուցիչ ֆինանսական միջոցներ գտնելու գործում: Դպրոցն այս պահին ունի առաջնահերթություն՝ կաթսայատան 2 կաթսաները պետք է նորերով փոխարինել, որն ըստ նախնական հաշվարկների հատում է 2,5 մլն. դրամի շեմը: Այս պահին ուղղակի ժամանակավոր լուծում է տրված, իսկ մասնագետների հետ խորհրդակցության արդյունքները հուշում են, որ կաթսայատունն այսօրվա վիճակով հաջորդ ձմռանը հնարավոր չի լինի շահագործել: Իսկ Լերմոնտովոն ծովի մակերևույթից բարձր է 1800մ, հետևաբար, ձմեռն այստեղ սաստիկ է և երկարատև: Ուսումնական գործընթացի անխափան ընթացքը ձմռանը և ցուրտ եղանակին կազմակերպելու համար առաջնային է կաթսայատան խնդրի լուծումը:

Ակնկալվող արդյունքներ

1. Պարտուսից դուրս մնացած սովորողների թվի նվազագույնը 50 տոկոսով կրճատում. արդյունքում՝ կավելանա նաև դպրոցում սովորողների ընդհանուր թիվը.
2. Ավագ դպրոցում սովորողների թվի աճ.
3. Որակյալ կրթական միջավայրի ապահովում.
4. Դպրոցը կհամալրվի բոլոր անհրաժեշտ մասնագետներով/ներառյալ հեռավար կազմակերպվող կրթությունը/.
5. Կիթանվի կամավոր ատեստավորմանը մասնակցությունը.
6. Ուսուցչի հուզական ինտելեկտի և մանկավարժական մտածելակերպի խթանում.

7. Ուսուցիչների ստեղծագործական մտքի, նորարարության և ինքնակրթության պահանջմունքների ակտիվ դրսևորում.
8. Դպրոցը կհամալրվի նորագույն տեխնոլոգիաներով.
9. Նորագույն տեխնոլոգիաների, ՏՏ-ների ակտիվ կիրառությունը կապահովի կրթական նորարարությունների արդյունավետությունը.
10. Կգրանցենք բուհ ընդունվող աշակերտների թվի աճ.
11. Կունենանք վերանորոգված, լուսավոր և ջեռուցվող դպրոց.
12. Կապահովվի առողջ և անվտանգ միջավայր.
13. Կունենանք ժամանակի պահանջներին համապատասխան և մրցունակ սովորողներ.
14. Կձևավորենք հայրենասիրության ոգով դաստիարակված անհատներ.
15. Ուսուցիչ-սովորող փոխվստահության և հարգանքի ձևավորում.
16. Ուսուցիչ-ծնող, դպրոց-ընտանիք համագործակցություն.
17. Կառավարման խորհուրդ-վարչական և մանկավարժական աշխատողներ համագործակցություն.
18. Դպրոց-համայնք մասնակցային համագործակցության ստեղծում.
19. Ուսումնական հաստատության թափանցիկ կառավարում.

5. Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումների ժամանակացույցը, նշված աշխատանքների կատարման արդյունքների գնահատման չափանիշները և վերահսկողության մեխանիզմները.

Նպատակ 1. Հաստատության շենքային պայմանների բարելավում, նյութատեխնիկական բազայի համալրում.

	Խնդիր	Գործողություն	Պատասխանատու	Ժամանակացույց	Անհրաժեշտ միջոցներ	Ռիսկեր	Վերահսկողության մեխանիզմներ
1.	Դպրոցի շենքային պայմանների բարելավում	Դպրոցի նոր մասնաշենքի կառուցում՝ ուսուցման համար հարմարավետ և բարեկեցիկ միջավայր ապահովելու նպատակով.	Տնօրեն Համակարգող Հաշվապահ	<u>2024-2029</u>	Պետական բյուջե	Կառավարության որոշման, հետևաբար, ֆինանսավորման բացակայություն, Արտաբյուջետային միջոցների, ներդրումների բացակայություն	Կառավարության և ԿԻՄ-ի կողմից զարգացման ծրագրի վերահսկողություն
		Կաթսայատան նորացում՝ դպրոցի ջեռուցումը անխաթար կազմակերպելու նպատակով.	Տնօրեն Համակարգող Հաշվապահ	<u>2024</u>	Դպրոցի բյուջե Պետական բյուջե Հովանավորներ	Ֆինանսական միջոցների անբավարարություն	ԿԻՄ-ի կողմից զարգացման ծրագրի վերահսկողություն
		Սանհանգույցների վերանորոգում, գույքի փոխարինում. հարմարեցում ԿԱՊԿ	Տնօրեն Համակարգող Հաշվապահ	<u>2025-2026</u>	Դպրոցի բյուջե Պետական բյուջե Հովանավորներ	Ֆինանսական միջոցների անբավարարություն, ֆորսամաժորային իրավիճակներով	ԿԻՄ-ի կողմից զարգացման ծրագրի վերահսկողություն

	ունեցող սովորողներին	հ		խնայողություններ, դրամաշնորհներ	պայմանավորված՝ առաջնահերթությունների փոփոխություն, ժամկետների խախտում.	ուն
	Դասասենյակների վերանորոգում.	Տնօրեն Համակարգող Հաշվապահ	<u>2026-</u> <u>2029</u>	Դպրոցի բյուջե, Հովանավորներ խնայողություններ	Ֆինանսական միջոցների անբավարարություն, առաջնահերթությունների փոփոխություն, ժամկետների խախտում.	ԿԽ-ի կողմից զարգացման ծրագրի վերահսկողություն
	Սպորտդահլիճի վերանորոգում՝ Ֆիզկուլտուրայի դասերի արդյունավետությունն ապահովելու նպատակով	Տնօրեն Համակարգող Հաշվապահ	<u>2026-</u> <u>2027</u>	Դպրոցի բյուջե Հովանավորներ խնայողություններ	Ֆինանսական միջոցների անբավարարություն, առաջնահերթությունների փոփոխություն, ժամկետների խախտում.	ԿԽ-ի կողմից զարգացման ծրագրի վերահսկողություն
	Սպորտդահլիճի հանդերձարանների կահավորում.	Տնօրեն Համակարգող Հաշվապահ	<u>2027-</u> <u>2028</u>	Դպրոցի բյուջե Հովանավորներ խնայողություններ	Ֆինանսական միջոցների անբավարարություն, առաջնահերթությունների փոփոխություն, ժամկետների խախտում.	ԿԽ-ի կողմից զարգացման ծրագրի վերահսկողություն
	Դպրոցի տանիքի մասնակի վերանորոգում. Ապահովել շենքի պահպանման կարիքները.	Տնօրեն Համակարգող Հաշվապահ	<u>2027-</u> <u>2028</u>	Դպրոցի բյուջե Պետական բյուջե հովանավորներ	Ֆինանսական միջոցների անբավարարություն, առաջնահերթությունների փոփոխություն, ժամկետների խախտում.	ԿԽ-ի կողմից զարգացման ծրագրի վերահսկողություն
	Դպրոցի բակի բարեկարգում.	Տնօրեն Համակարգող Հաշվապահ	<u>2025-</u> <u>2029</u>	Դպրոցի բյուջե Պետական բյուջե հովանավորներ	Ֆինանսական միջոցների անբավարարություն, առաջնահերթությունների փոփոխություն, ժամկետների խախտում.	ԿԽ-ի կողմից զարգացման ծրագրի վերահսկողություն

	Խաղահրապարակի բարեկարգում և կահավորում.	Տնօրեն Համակարգող Հաշվապահ	<u>2026-2029</u>	Դպրոցի բյուջե Պետական բյուջե հովանավորներ	Ֆինանսական միջոցների անբավարարություն, առաջնահերթությունների փոփոխություն, ժամկետների խախտում.	ԿԽ-ի կողմից զարգացման ծրագրի վերահսկողություն
	Փայտե հին պատուհանների փոխարինում մետաղական շրջանակներ ունեցող պատուհաններով.	Տնօրեն Համակարգող Հաշվապահ	<u>2026-2029</u>	Դպրոցի բյուջե Պետական բյուջե հովանավորներ	Ֆինանսական միջոցների անբավարարություն, առաջնահերթությունների փոփոխություն, ժամկետների խախտում.	ԿԽ-ի կողմից զարգացման ծրագրի վերահսկողություն
	Դպրոցի ներքին և արտաքին հատվածներում տեսախցիկների տեղադրում.	Տնօրեն Համակարգող Հաշվապահ	<u>2028-2029</u>	Դպրոցի բյուջե, խնայողություններ, հովանավորներ	Ֆինանսական միջոցների անբավարարություն, առաջնահերթությունների փոփոխություն, ժամկետների խախտում.	ԿԽ-ի կողմից զարգացման ծրագրի վերահսկողություն
	Դպրոցի նկուղը ապաստարանի փոխակերպում, կահավորում	Տնօրեն Համակարգող Հաշվապահ	<u>2025-2029</u>	Դպրոցի բյուջե Պետական բյուջե հովանավորներ	Ֆինանսական միջոցների անբավարարություն, առաջնահերթությունների փոփոխություն, ժամկետների խախտում.	ԿԽ-ի կողմից զարգացման ծրագրի վերահսկողություն
	Հակահրդեհային ազդանշանի կամ հրդեհաշիջման ավտոմատ համակարգի տեղադրում.	Տնօրեն Համակարգող Հաշվապահ	<u>2026-2027</u>	Դպրոցի բյուջե Պետական բյուջե հովանավորներ	Ֆինանսական միջոցների անբավարարություն, առաջնահերթությունների փոփոխություն, ժամկետների խախտում.	ԿԽ-ի կողմից զարգացման ծրագրի վերահսկողություն
	Բուժկետի անկյունի ստեղծում.	Տնօրեն Համակարգող	<u>2026-2027</u>	Դպրոցի բյուջե խնայողություններ	Ֆինանսական միջոցների անբավարարություն, առաջնահերթությունների	ԿԽ-ի կողմից զարգացման ծրագրի

			Հաշվապահ			փոփոխություն, ժամկետների խախտում.	վերահսկողություն
2.	Դպրոցի նյութատեխնիկական բազայի և գույքի համալրում	Լաբորատոր սարքերի և նյութերի ձեռքբերում՝ ուսումնական գործընթացի արդյունավետությունն ապահովելու նպատակով	Տնօրեն Համակարգող Հաշվապահ	<u>2026-2029</u>	Դպրոցի բյուջե Պետական բյուջե հովանավորներ Հովանավորներ Խնայողություններ, դրամաշնորհներ	Ֆինանսական միջոցների անբավարարություն, առաջնահերթությունների փոփոխություն, ժամկետների խախտում.	ԿԽ-ի կողմից զարգացման ծրագրի վերահսկողություն
		Գրատախտակների ձեռքբերում	Տնօրեն Համակարգող Հաշվապահ	2024-2027	Դպրոցի բյուջե Հովանավորներ Խնայողություններ, դրամաշնորհներ	Ֆինանսական միջոցների անբավարարություն, առաջնահերթությունների փոփոխություն, ժամկետների խախտում.	ԿԽ-ի կողմից զարգացման ծրագրի վերահսկողություն
		Աշակերտական սեղանաթոռների նորացում	Տնօրեն Համակարգող Հաշվապահ	2024-2029	Դպրոցի բյուջե Հովանավորներ Հովանավորներ Խնայողություններ, դրամաշնորհներ	Ֆինանսական միջոցների անբավարարություն, առաջնահերթությունների փոփոխություն, ժամկետների խախտում.	ԿԽ-ի կողմից զարգացման ծրագրի վերահսկողություն
		Ուսուցչական սեղանաթոռների ձեռքբերում	Տնօրեն Համակարգող Հաշվապահ	2027-2029	Դպրոցի բյուջե Հովանավորներ Հովանավորներ Խնայողություններ, դրամաշնորհներ	Ֆինանսական միջոցների անբավարարություն, առաջնահերթությունների փոփոխություն, ժամկետների խախտում.	ԿԽ-ի կողմից զարգացման ծրագրի վերահսկողություն

				ը		
	Ճաշարանի սեղան-աթոռների ձեռքբերում	Տնօրեն Համակարգող Հաշվապահ	2024-2025	Դպրոցի բյուջե Հովանավորներ Հովանավորներ Խնայողություններ, դրամաշնորհներ	Ֆինանսական միջոցների անբավարարություն, առաջնահերթությունների փոփոխություն, ժամկետների խախտում.	ԿԽ-ի կողմից զարգացման ծրագրի վերահսկողություն
	Դասասենյակների գույքի նորացում, վերազինում/կախիչներ պահարաններ/.	Տնօրեն Համակարգող Հաշվապահ	2027-2029	Դպրոցի բյուջե Հովանավորներ Խնայողություններ	Ֆինանսական միջոցների անբավարարություն, առաջնահերթությունների փոփոխություն, ժամկետների խախտում.	ԿԽ-ի կողմից զարգացման ծրագրի վերահսկողություն
	Շարժական ինտերնետի ժամանակակից պահանջների համապատասխան ուսուցման գործընթացի կազմակերպման նպատակով.	Տնօրեն Համակարգող Հաշվապահ	2024	Դպրոցի բյուջե Հովանավորներ Խնայողություններ	Ֆինանսական միջոցների անբավարարություն, առաջնահերթությունների փոփոխություն, ժամկետների խախտում.	ԿԽ-ի կողմից զարգացման ծրագրի վերահսկողություն
	ՏՀՏ ժամանակակից սարքավորումների ձեռքբերում.	Տնօրեն Համակարգող Հաշվապահ	2026-2029	Դպրոցի բյուջե Հովանավորներ Խնայողություններ	Ֆինանսական միջոցների անբավարարություն, առաջնահերթությունների փոփոխություն, ժամկետների խախտում.	ԿԽ-ի կողմից զարգացման ծրագրի վերահսկողություն
	Գրադարանի համալրում. Աշխատակազմին և աշակերտներին	Տնօրեն Համակարգող	2024-2029	Դպրոցի բյուջե Հովանավորներ Խնայողություն	Ֆինանսական միջոցների անբավարարություն, առաջնահերթությունների	ԿԽ-ի կողմից զարգացման ծրագրի

	ապահովել մեթոդական և գեղարվեստական գրականությամբ	Հաշվապահ		ներ	փոփոխություն, ժամկետների խախտում.	վերահսկողություն
	ԿԱՊԿ ունեցող սովորողների համար ուսումնական պայմանների ապահովում. համապատասխան գույքով, նյութատեխնիկական բազայով հագեցած ռեսուրս սենյակի ստեղծում	Տնօրեն Համակարգող Հաշվապահ	2029	պետական ֆինանսավորում, դպրոցի բյուջե, խնայողություններ, դրամաշնորհներ	Արտաբյուջետային և դպրոցի միջոցների, ներդրումների բացակայություն	ԿԽ-ի կողմից զարգացման ծրագրի վերահսկողություն

Ուսուցիչները մեղմացնող գործողություններ.

Ֆինանսական միջոցների նպատակային օգտագործում, տնտեսում, խելամիտ խնայողություն
Դպրոցի խնայողությունների ճիշտ և նպատակային օգտագործում
Դրամաշնորհային ծրագրերին ակտիվ մասնակցություն
Բարերարների, հովանավորների ներգրավում
Հոգաբարձուների խորհրդի ձևավորում, ակտիվ համագործակցության ստեղծում

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՉԱՓՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

N	Գնահատման ենթակա գործողություն	Գնահատման չափանիշ Բավարար արդյունք	Գնահատման չափանիշ Լավ արդյունք	Գնահատման չափանիշ Գերազանց արդյունք
1.	Դպրոցի նոր մասնաշենքի կառուցում՝ ուսուցման համար հարմարավետ և բարեկեցիկ միջավայր ապահովելու նպատակով.	Աշխատանքները կատարվել են մասնակի, ֆինանսական ռեսուրսները, այլ միջոցները ծախսվել են ոչ նպատակային և արդյունավետ. ժամկետները չեն պահպանվել	Աշխատանքները կատարվել են գրեթե ամբողջությամբ, ֆինանսական միջոցները ծախսվել են նպատակային. ժամկետները ճշգրտորեն չեն պահպանվել	Աշխատանքները լիարժեք կատարվել են, ֆինանսական միջոցները ծախսվել են նպատակային և արդյունավետ. աշխատանքների կատարման ժամկետներն ամբողջությամբ պահպանվել են
2.	Կաթսայատան նորացում՝ դպրոցի ջեռուցումը անխաթար կազմակերպելու նպատակով.	Աշխատանքները կատարվել են մասնակի, ֆինանսական ռեսուրսները, այլ միջոցները ծախսվել են ոչ նպատակային և արդյունավետ. ժամկետները չեն պահպանվել	Աշխատանքները կատարվել են գրեթե ամբողջությամբ, ֆինանսական միջոցները ծախսվել են նպատակային. ժամկետները ճշգրտորեն չեն պահպանվել	Աշխատանքները լիարժեք կատարվել են, ֆինանսական միջոցները ծախսվել են նպատակային և արդյունավետ. աշխատանքների կատարման ժամկետներն ամբողջությամբ պահպանվել են
3.	Սանհանգույցների վերանորոգում, գույքի փոխարինում. հարմարեցում ԿԱՊԿ ունեցող սովորողներին	Աշխատանքները կատարվել են մասնակի, ֆինանսական ռեսուրսները, այլ միջոցները ծախսվել են ոչ նպատակային և արդյունավետ. ժամկետները չեն պահպանվել	Աշխատանքները կատարվել են գրեթե ամբողջությամբ, ֆինանսական միջոցները ծախսվել են նպատակային. ժամկետները ճշգրտորեն չեն պահպանվել	Աշխատանքները լիարժեք կատարվել են, ֆինանսական միջոցները ծախսվել են նպատակային և արդյունավետ. աշխատանքների կատարման ժամկետներն ամբողջությամբ պահպանվել են
4.	Դասասենյակ ների վերանորոգում.	Աշխատանքները կատարվել են մասնակի, ֆինանսական	Աշխատանքները կատարվել են գրեթե ամբողջությամբ,	Աշխատանքները լիարժեք կատարվել են, ֆինանսական

		<p>ռեսուրսները, այլ միջոցները ծախսվել են ոչ նպատակային և արդյունավետ. ժամկետները չեն պահպանվել</p>	<p>ֆինանսական միջոցները ծախսվել են նպատակային. ժամկետները ճշգրտորեն չեն պահպանվել</p>	<p>միջոցները ծախսվել են նպատակային և արդյունավետ. աշխատանքների կատարման ժամկետներն ամբողջությամբ պահպանվել են</p>
5.	<p>Սպորտդահլիճի վերանորոգում՝ Ֆիզկուլտուրայի դասերի արդյունավետությունն ապահովելու նպատակով</p>	<p>Աշխատանքները կատարվել են մասնակի, ֆինանսական ռեսուրսները, այլ միջոցները ծախսվել են ոչ նպատակային և արդյունավետ. ժամկետները չեն պահպանվել</p>	<p>Աշխատանքները կատարվել են գրեթե ամբողջությամբ, ֆինանսական միջոցները ծախսվել են նպատակային. ժամկետները ճշգրտորեն չեն պահպանվել</p>	<p>Աշխատանքները լիարժեք կատարվել են, ֆինանսական միջոցները ծախսվել են նպատակային և արդյունավետ. աշխատանքների կատարման ժամկետներն ամբողջությամբ պահպանվել են</p>
6.	<p>Սպորտդահլիճի հանդերձարանների կահավորում.</p>	<p>Աշխատանքները կատարվել են մասնակի, ֆինանսական ռեսուրսները, այլ միջոցները ծախսվել են ոչ նպատակային և արդյունավետ. ժամկետները չեն պահպանվել</p>	<p>Աշխատանքները կատարվել են գրեթե ամբողջությամբ, ֆինանսական միջոցները ծախսվել են նպատակային. ժամկետները ճշգրտորեն չեն պահպանվել</p>	<p>Աշխատանքները լիարժեք կատարվել են, ֆինանսական միջոցները ծախսվել են նպատակային և արդյունավետ. աշխատանքների կատարման ժամկետներն ամբողջությամբ պահպանվել են</p>
7.	<p>Դպրոցի տանիքի մասնակի վերանորոգում. Ապահովել շենքի պահպանման կարիքները.</p>	<p>Աշխատանքները կատարվել են մասնակի, ֆինանսական ռեսուրսները, այլ միջոցները ծախսվել են ոչ նպատակային և արդյունավետ. ժամկետները չեն պահպանվել</p>	<p>Աշխատանքները կատարվել են գրեթե ամբողջությամբ, ֆինանսական միջոցները ծախսվել են նպատակային. ժամկետները ճշգրտորեն չեն պահպանվել</p>	<p>Աշխատանքները լիարժեք կատարվել են, ֆինանսական միջոցները ծախսվել են նպատակային և արդյունավետ. աշխատանքների կատարման ժամկետներն ամբողջությամբ պահպանվել են</p>
8.	<p>Դպրոցի բակի բարեկարգում.</p>	<p>Աշխատանքները կատարվել են մասնակի, ֆինանսական ռեսուրսները, այլ միջոցները</p>	<p>Աշխատանքները կատարվել են գրեթե ամբողջությամբ, ֆինանսական միջոցները</p>	<p>Աշխատանքները լիարժեք կատարվել են, ֆինանսական միջոցները ծախսվել են</p>

		ծախսվել են ոչ նպատակային և արդյունավետ. Ժամկետները չեն պահպանվել	ծախսվել են նպատակային. Ժամկետները ճշգրտորեն չեն պահպանվել	նպատակային և արդյունավետ. աշխատանքների կատարման Ժամկետներն ամբողջությամբ պահպանվել են
9.	Խաղահրապարակի բարեկարգում և կահավորում.	Աշխատանքները կատարվել են մասնակի, ֆինանսական ռեսուրսները, այլ միջոցները ծախսվել են ոչ նպատակային և արդյունավետ. Ժամկետները չեն պահպանվել	Աշխատանքները կատարվել են գրեթե ամբողջությամբ, ֆինանսական միջոցները ծախսվել են նպատակային. Ժամկետները ճշգրտորեն չեն պահպանվել	Աշխատանքները լիարժեք կատարվել են, ֆինանսական միջոցները ծախսվել են նպատակային և արդյունավետ. աշխատանքների կատարման Ժամկետներն ամբողջությամբ պահպանվել են
10.	Փայտե հին պատուհանների փոխարինում մետաղական շրջանակներ ունեցող պատուհաններով.	Աշխատանքները կատարվել են մասնակի, ֆինանսական ռեսուրսները, այլ միջոցները ծախսվել են ոչ նպատակային և արդյունավետ. Ժամկետները չեն պահպանվել	Աշխատանքները կատարվել են գրեթե ամբողջությամբ, ֆինանսական միջոցները ծախսվել են նպատակային. Ժամկետները ճշգրտորեն չեն պահպանվել	Աշխատանքները լիարժեք կատարվել են, ֆինանսական միջոցները ծախսվել են նպատակային և արդյունավետ. աշխատանքների կատարման Ժամկետներն ամբողջությամբ պահպանվել են
